Ազգ
Azg
3 ԱՊՐԻԼ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 59(4911)
ISSN: 1829-1651

# ԱՄՆ-ը չի հստակեցնում, թե ինչ ուղերձով է խոսում Թուրքիայի հետ հայ-թուրքական թեմայի շրջանակներում

Հայ-թուրքական հարաբերություններում շահագրգռությունների ու տարբեր շահեր հետապնդող տարածաշրջանային դերակատարների պակաս չի զգացվում, սակայն այդ շահագրգռությունները ոչ մի կերպ չեն վերածվում թուրքական կողմի նկատմամբ կոնկրետ ճնշումների կամ, ընդհանրապես կրելով հռետորական բնույթ, բնավ չեն գերակայում Թուրքիայի հետ կապված ու Թուրքիայի օգտագործմանն առնչվող շահերի նկատմամբ:

Հերթական անգամ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացումը կարեւորել է ԱՄՆ պետքարտուղարությունը: Մարտի 31-ի ճեպազրույցում ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի՝ «փայլ անելու հերթը Թուրքիայինն է» հայաստանյան հայտարարության համաձայն Թուրքիային նման ուղերձ փոխանցված լինելու մասին հարցի առնչությամբ, պետքարտուղարության հաղորդագրությամբ, հայտարարվել է հաստատակամ աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացմանը:

«ԱՄՆ-ը հաստատակամորեն իր աջակցությունն է հայտնում Հայաստանի եւ Թուրքիայի ջանքերին՝ ուղղված երկկողմ հարաբերությունների կարգավորմանը», ասվում է հաղորդագրության մեջ, հավելմամբ, որ այդ հարցը «քննարկման մշտական բաղկացուցիչ է ինչպես Հայաստանի, այնպես էլ Թուրքիայի հետ ամենաբարձր մակարդակով տարվող երկխոսության»:

Ա. Հ.

# Մինսկի խմբի աշխատանքը բարձր գնահատականի է արժանի՝ «անկախ այլ գնահատականներից»

## *ԼՂՀ հարցը, Իրանը, Սիրիան՝ Լավրովի երեւանյան այցելությունը*

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռուսաստանը պատրաստ է հնարավորինս ամեն կերպ աջակցելու ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը: Այդ մասին երեկ Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանի** հետ համատեղ ասուլիսում հայտարարել է Ռուսաստանի ԱԳ նախարար **Սերգեյ Լավրովը**, որ երկօրյա պաշտոնական այցով գտնվում է Երեւանում՝ ի նշանավորումն հայ-ռուսաստանյան դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակի:




Ռուսաստանի համար, ըստ Լավրովի, Հայաստանն ու Ադրբեջանը բարեկամ երկրներ են, ուստի ՌԴ նախագահի մակարդակով կազմակերպվող հանդիպումները միտված են խաղաղ կարգավորմանը՝ հաշվի առնելով կողմերի ցանկությունները: Եվ այս ամենը ԵԱՀԿ Մինսկի խմբի մյուս համանախագահների հետ միասին, որոնց աշխատանքը Լավրովը եւս բարձր է գնահատում՝ անկախ հնչող տարբեր գնահատականներից:

Տվյալ դեպքում, խոսքը կարող է վերաբերել միայն եւ միայն ադրբեջանական կողմի մանր ու միջին չինովնիկների մակարդակով ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությունից դժգոհության արտահայտումներին: Ի հակադրություն ՄԽ գործունեությունից դժգոհությունների՝ հիշատակման են արժանի Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների համատեղ ստորագրած հայտարարությունները՝ պատրաստակամությամբ շարունակելու բանակցությունները նույն ձեւաչափում: Ավելին, Լավրովի հիշեցմամբ, Հայաստանի եւ Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշումները ամրագրված են փաստաթղթերում, եւ դրանք չեն փոխվել:

*Տես էջ 2*

# Ղարաբաղյան թեմայով քննարկումներ նախ Դուբլինում, ապա Լոնդոնո՞ւմ

ԵԱՀԿ յուրաքանչյուր նոր գործող նախագահ իր սրբազան պարտքն է համարում անդրադառնալ, ավելին՝ կարեւորել ու իր նախագահության ժամկետներում առաջընթաց ապահովելու խոստումներ տալ ԵԱՀԿ տարածքում հակամարտությունների կարգավորման հարցում:

Հերթական անգամ էլ, երբ գործող նախագահ է Իռլանդիայի արտգործնախարարը, հնչեցին խոստումներ, թե հակամարտությունների կարգավորմանը մասնակից կողմերին կներկայացվի այդպիսի իրավիճակների լուծման իռլանդական փորձը, ընդ որում, այդպիսի մի ներկայացում կարող է կազմակերպվել Դուբլինում՝ ղարաբաղյան խնդրի քննարկման ձեւաչափով: Ու թեեւ իռլանդական կողմից նախատեսված քննարկումը ապրիլին անցկացնելու մասին հայտարարվել էր, սակայն ցայսօր կոնկրետ ժամկետներ չեն նշվում:

Այդուհանդերձ, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, երեկ Բաքվում Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը կրկին հիշեցրել է Դուբլինում անցկացվելիք այդ քննարկման մասին, սակայն այլ համատեքստում եւ ոչ միայն ղարաբաղյան խնդրի շուրջը: Մասնավորապես, Մամեդյարովը հայտարարել է, թե ոչ պաշտոնական ձեւաչափով հնարավոր է, որ հանդիպեն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների արտգործնախարարները: Ու թեեւ վերջիններս մարտի վերջին Մինսկի գործընթացի 20-ամյակի կապակցությամբ արդեն իսկ հանդես են եկել հայտարարությամբ, ըստ Մամեդյարովի, նմանօրինակ հանդիպում նախատեսվում է նաեւ դուբլինյան հանդիպումից հետո անցկացնել Լոնդոնում:

Մամեդյարովը նաեւ հայտարարել է, թե «եկել է ղարաբաղյան հակամարտության կարգավորման ժամանակը», բնականաբար, ասվածի պոչին ավելացնելով ադրբեջանական դիրքորոշման մանրամասները: Այդպիսիք Մամեդյարովն առատորեն հրամցրել է նաեւ Բաքվում երեկ մեկնարկած «Եվրոնեստի» խորհրդարանական քննարկումների մասնակիցներին:

Ա. Հ.

# Կիպրոսի արտգործնախարարը կժամանի Հայաստան

Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հրավերով այսօր երկօրյա պաշտոնական այցով Հայաստան կայցելի Կիպրոսի Հանրապետության արտգործնախարար **Էրատո Կոզակու-Մարկուլիսը**: ԱԳՆ հաղորդագրության համաձայն՝ այցի ընթացքում Կիպրոսի ԱԳ նախարարին կընդունեն նախագահ Սերժ Սարգսյանը, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն, վարչապետ Տիգրան Սարգսյանը: Էրատո Կոզակու-Մարկուլիսը կայցելի նաեւ Ծիծեռնակաբերդ, ուր ծաղկեպսակ կդնի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Ա. Հ.

# Ստեփանակերտի օդանավակայանը շահագործման կհանձնվի ամռանը

Ստեփանակերտի օդանավակայանում տեխնիկական վերազինման վերջին աշխատանքներ են ընթանում: Միաժամանակ աշխատանքներ են տարվում ինքնաթիռների ձեռքբերման եւ համապատասխան անձնակազմ նախապատրաստելու համար: Սա վերջին փուլն է, որի ավարտից հետո Ստեփանակերտի օդանավակայանն ամբողջովին պատրաստ կլինի շահագործման: ԼՂՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետ **Վալերի Աղբաշյանի** փոխանցմամբ՝ առաջին թռիչքը Ստեփանակերտի օդանավակայանից կիրականացվի արգենտինահայ բարերար Էդուարդո Էռնեկյանի նվիրած ինքնաթիռով: «Առաջին թռիչքը պլանավորում ենք այս տարվա հունիս-հուլիս ամիսներին», ասաց նա:

Թեպետ օդանավակայանի բացումը նախատեսված էր նախորդ գարնանը, սակայն շինարարական աշխատանքների եւ տեխնիկական վերազինման աշխատանքների պատճառով բացումը հետաձգվեց: Հիշեցնենք, որ նախորդ տարի նույն ժամանակահատվածում, երբ խոսակցություններ էին ընթանում օդանավակայանի շահագործման մասին, Ադրբեջանի քաղաքացիական ավիացիայի վարչությունից հայտարարեցին, թե կռմբակոծեն Ստեփանակերտի օդանավակայանից թռիչք իրականացնող օդանավերը: Հայաստանը եւս մեկ անգամ հիշեցնում է, որ Ադրբեջանը Հայաստանի հետ Միջազգային քաղաքացիական ավիացիայի ICAO կազմակերպության անդամ է, ստորագրել է կոնվենցիա, համաձայն որի ICAO անդամ բոլոր երկրները պարտավորվում են ոչ մի պարագայում չվտանգել քաղաքացիական ավիացիայի ուղեւորների կյանքը: Բաքվից եկող այս հայտարարությանը պատասխանել էր նաեւ նախագահ Սերժ Սարգսյանը՝ հայտարարելով, որ Երեւան-Ստեփանակերտ առաջին թռիչքի ուղեւորն է լինելու:

Ստեփանակերտի օդանավակայանը քաղաքից 8 կմ հեռու է. զբաղեցնում է 230 հեկտար տարածք: Օդանավակայանը ճախրող թռչունի տեսք ունի, երկհարկանի է, կունենա բար, սրճարան, VIP սրահ հատուկ հյուրերի համար, բուժկետ եւ ավտոկայանատեղի: Օդանավակայանի վերակառուցման ընդհանուր արժեքը կազմել է 5 մլն դոլար: Երեւան-Ստեփանակերտ թռիչքը կտեւի 35 րոպե, տոմսի արժեքը կկազմի 15-20.000 դրամ:

Հ. Հ.

# Շանթ եւ շանթարգել

## *Ընտրությունների մոտենալու հետ տարբեր աբսուրդային վիճակների ականատեսն ենք դառնում եւ դառնալու ենք*

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Դեռ ԲՀԿ համագումարին էր նկատելի, որ այս կուսակցությունում ընտրել են թիրախը կիսելու կամ կոտորակելու քաղաքականություն, այն է՝ առաջնորդն ամեն ինչ իր վրա չի վերցնում, այլ՝ բան հասկացնելու մի փոքրիկ դոզա միայն, քննադատելու եւ բան հասկացնելու մյուս դոզաները թողնելով ուրիշներին: Այս մարտավարության դեպքում հակահարվածը եւս կոտորակվում է, ընդ որում՝ միշտ կարելի է սահմանազատվել այն քննադատությունից, որը տվյալ դեպքում տարընթերցումների տեղիք է տալիս, սակայն միաժամանակ տեղ է անում լսողի սրտում՝ ասելով, թե դա իր անձնական տեսակետն է: Այս մարտավարությունը սկսեց ավելի երեւակվել պաշտոնական քարոզարշավի մեկնարկին մոտենալու հետ: Երբ անցած շաբաթավերջին ԲՀԿ համամասնական ցուցակի երկրորդ համար **Վարդան Օսկանյանը** «Ազատությանը» ասաց, թե կոալիցիան ձեւական էր, քանի որ Հանրապետականը ԲՀԿ-ի ձայների կարիքը չուներ, ԲՀԿ առաջնորդի մամուլի խոսնակ **Խաչիկ Գալստյանը** հենց այդ տարբերակին դիմեց՝ ազատ վերլուծաբան է, իր տեսակետն է հայտնել: Նույն բանն ասվեց այն ժամանակ, երբ Օսկանյանը մասնակցում էր «Ազատ դեմոկրատներ»-ի համագումարին՝ որպես անհատ էր մասնակցում:



Սակայն պաշտոնական քարոզչությունը դռանը՝ ԲՀԿ երկրորդ համարը հո՞ չի կարող անվերջ սեփական կարծիքներ հայտնել, նա այս կուսակցության ամենաառաջատար դիրքում է հիմա: Մանավանդ՝ երբ ասում է, թե պնդելու է, որ ԲՀԿ-ն ՀՀԿ-ի հետ կոալիցիա չկազմի ապագայում (դե՝ եթե ընտրակեղծիքներ լինեն), երեւի համոզված է, որ իր տեսակետը շատ կարեւոր է: Ճիշտն ասած՝ մենք այն աստիճանի միամիտ չենք, որ մտածենք, թե նա սեփական կարծիք է հայտնում, ամենայն հավանականությամբ՝ սա արվում է ԲՀԿ առաջնորդի գիտությամբ ու անգամ՝ համաձայնությամբ, քանի որ նրա հետ թեկուզ դույզն-ինչ անհամաձայն մարդիկ ԲՀԿ ցուցակում չեն հայտվել: Փաստորեն՝ Վ. Օսկանյանը եւ մի շարք այլ ԲՀԿ-ականներ, հատկապես նոր դեմքերը, լինելու են շանթը, Գագիկ Ծառուկյանը եւ իր թիմի այլ անդամներ՝ շանթարգելը, որ մեղմելու են իրենց շանթգործընկերների կայծակումները, ու մեն-միակ նպատակը՝ Հայաստանում առկա դժգոհների բավական ստվար բազմությանը հույս տալն է, թե այս կուսակցությունը, իշխելու հնարավորություն ունենալու դեպքում, ՀՀԿ-ից տարբեր է վարվելու, այդպիսով նրանց քվեները տանելով:

*Տես էջ 2*

# Բուլղար վարչապետը տարածաշրջանում է՝ առանց Ադրբեջան այցելության

Բուլղարիայի վարչապետ **Բոյկո Բորիսովը**, բուլղարական մամուլի տեղեկացմամբ, այս օրերին տարածաշրջանային այցելությամբ պետք է լիներ ինչպես Հայաստանում եւ Վրաստանում, այնպես էլ Ադրբեջանում:

Բուլղարիայի վարչապետը, դեռեւս կիրակի ժամանելով Վրաստան, երեկ մինչեւ ուշ երեկո շարունակում էր իր այցը վարչապետ Նիկա Գիլաուրիի հրավերով: Վրաստանում Բորիսովը հանդիպել է երկրի նախագահի, վարչապետի, վրաց պատրիարքի հետ, նաեւ այցելել է Բաթում՝ Աջարական ինքնավարության ղեկավարության հետ հանդիպելու նպատակով: Վրացական լրատվամիջոցների փոխանցմամբ, բուլղար գործադիրին նախագահ Սաակաշվիլու հետ հանդիպմանն առավելապես հետաքրքրել է Կասպյան ավազանից «Ռուսաստանի շրջանցմամբ» անցնող էներգառուղիների նախագծերի քննարկումը:



Բուլղարիայի ներկայացուցիչը Սաակաշվիլուն է փոխանցել նաեւ Բուլղարիայի աջակցությունը՝ ՆԱՏՕ եւ ԵՄ ուղղվածության հարցում:

Բոյկո Բորիսովի այցելությունների ժամանակացույցով մինչեւ ապրիլի 3-ը նախատեսված են նաեւ հայաստանյան հանդիպումներ: Բուլղար գործադիր իշխանության ղեկավարը երեկ ժամանեց Երեւան վարչապետ Տիգրան Սարգսյանի հրավերով: Այսօր կհանդիպի Հայաստանի նախագահին, վարչապետին, ԱԺ նախագահին եւ Ամենայն հայոց կաթողիկոսին:

Ինչ վերաբերում է Ադրբեջան այցելությանը, ապա Ադրբեջանում Բուլղարիայի դեսպանատնից տեղեկացրել են, որ այցը հետաձգվել է եւ տեղի կունենա ապրիլի 26-27-ին: «Ազերիպրես» գործակալությունը հայտնում է, որ այցելության օրակարգը դեռ հստակեցման փուլում է, ինչը քիչ տարօրինակ է, եթե հաշվի առնենք, որ Հայաստան եւ Վրաստան այցելության հետ մեկտեղ նախապես ծրագրվել էր Բուլղարիայի վարչապետի այցը նաեւ Ադրբեջան: Ա. Հ.

# Մինսկի խմբի աշխատանքը բարձր գնահատականի է արժանի՝ «անկախ այլ գնահատականներից»

*1-ին էջից*

Ադրբեջանի կողմից ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումներին անընդմեջ եւ աղավաղումներով հղումներ անելու առնչությամբ հարցին ի պատասխան արդեն Էդվարդ Նալբանդյանը հիշեցրել է, որ այդ բանաձեւերն ընդունվել են 1993-ի ապրիլից նոյեմբեր, ընդ որում, հիմնական պահանջ դրանցում ներկայացվում էր զինադադարի կնքումը՝ վերջ դնելով ռազմական գործողություններին: Մինչդեռ Ադրբեջանը, չկատարելով բանաձեւերի պահանջները, ժամանակին փորձ արեց ավելի ակտիվացնել ռազմական քայլերն ու պարտություն կրեց, նույն բանաձեւերի համաձայն, «տեղի հայկական ուժերից»: Նալբանդյանի խոսքով. «Այդ էջը թերթված է», ու հիմա բանակցությունները ուղղված են կարգավորմանը:

## Իրանյան ճգնաժամ

Հայաստանի եւ Ռուսաստանի ԱԳ նախարարները անդրադարձել են նաեւ իրանական թեմային՝ որպես արձագանք հնչած հարցերին: Թե ինչպես կարող է Իրանի շուրջը իրավիճակի լարումը պրոյեկտվել Հայաստանի անվտանգության եւ ղարաբաղյան գործընթացի վրա՝ Նալբանդյանը պարզաբանել է. «Հայաստանը կողմ է հարցերի կարգավորմանը բանակցությունների, Իրանի եւ միջազգային հանրության ներկայացուցիչների համատեղ ջանքերի միջոցով»: «Իրանը Հայաստանի հարեւան երկիր է, եւ մենք շահագրգիռ ենք, որ Իրանին վերաբերող հարցերի լուծման ուղիները անցնեն երկխոսության ու բանակցությունների, այլ ոչ ուժի կիրառման ճանապարհով»:

Իրանի թեման առավել ընդարձակ մեկնաբանել է Լավրովը, նախ շեշտելով, որ վատագույն տարբերակի իրականանալու՝ Իրանում ռազմական գործողություններ սկսելու դեպքում խնդիրներ կծագեն ոչ միայն Հայաստանի, այլեւ Ադրբեջանի անվտանգության առումով՝ հաշվի առնելով Իրանից փախստականների հոսքը: Ընդ որում, ադրբեջանախոս այդ փախստականների զգալի մասն էլ կարող է հայտնվել Ռուսաստանում:

Լավրովը հարկ է համարել Երեւանից զգուշացնել միջազգային որոշ դերակատարների՝ «կանխարգելիչ» հարվածներ կատարելու առնչությամբ, հիշեցնելով, որ բոլոր կիրառելի մեթոդները պետք է լինեն օրինական՝ հիմնված միջազգային իրավունքի վրա:

## Սիրիական ճգնաժամ

Արդեն սիրիական թեմային անդրադառնալով՝ Լավրովը խոսել է Կոֆի Անանի ծրագրից, շեշտելով, որ այդ ծրագրի առաջարկները ուղղված են ոչ միայն Սիրիայի իշխանություններին, այլեւ ընդդիմությանը: Ռուսաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը հույս է հայտնել, որ սիրիացի ժողովրդի, հարեւան երկրների ու ողջ տարածաշրջանի ճակատագրով բոլոր մտահոգվածները «առավելագույնս պատասխանատու կվերաբերվեն»: Ստամբուլում «Սիրիայի բարեկամների խումբ» անվանված հավաքին Ռուսաստանի բացակայությունն էլ Լավրովը պարզաբանել է այն հանգամանքով, որ այդօրինակ հավաքներին պետք է ներկա լինեն Սիրիայի ժողովրդի բոլոր հատվածները, այլ ոչ միայն ընդդիմությունը:

# Շանթ եւ շանթարգել

*1-ին էջից*

Սակայն սա հին է նրանով, որ կրակի հետ խաղալիս կարող ես մատներդ վառել, վկան հանրապետականների ակտիվ արձագանքն է՝ նախ ԱԺ փոխխոսնակ Է. **Շարմազանովի** շուրթերով, թե՝ ինքը կոալիցիոն գործընկերոջ մասին ավելի լավ կարծիքի է, քան Օսկանյանը: Եվ ապա՝ այլ ՀՀԿ-ականներ եւս բավական սուր եւ ցավոտ արձագանքեցին, ինչը ցույց է տալիս, որ ՀՀԿ-ն անտարբեր չի կարող նայել գործընկերոջ պահվածքին ու կփորձի շրջանակի մեջ դնել նրան: Կստացվի՞ արդյոք, շատ շուտով կիմանանք:

Նախընտրական թոհուբոհին զուգահեռ Մաշտոցի այգում ծավալվում է հակաբուշիկյային հեղափոխությունը, ու բնապահպանների պայքարը հետաքրքրական ձեւեր է ընդունում՝ անգամ դիմում-բողոք առ Եվրոպական կառույցներ: Թեեւ՝ Հայաստանում ԱՄՆ դեսպանը նրանց գործերին դրսի միջամտություն երազողներին հասկացնում է. «Ձեր պետությունն է, մերը չէ, ուստի ոչինչ անել չենք կարող»՝ նկատի ունի ընտրակեղծիքները կանխելը, բայց մեր հակաբուշիկյայինները իրենց պայքարի կիզակետում են եւ դիմում են բոլորին, ում կարելի է դիմել: Իսկ այս հակաբուշիկյային հեղափոխությունը նախընտրական նպատակներով օգտագործել երազողների պակաս եւս չկա:

Մինչ այդ՝ ապրիլի մեկին, խաբելու օրը (երեւի խորհրդանշական բան կա դրա մեջ) ԿԸՀ-ն գրանցեց համամասնական կարգով ընտրությունների հայտ ներկայացրած 8 կուսակցության եւ մեկ դաշինքի, ինչպես նաեւ մեծամասնական կարգով առաջադրվածներին, որոնց թիվը 181-ից կամաց-կամաց ինքնաբացարկներով մաղվելով՝ հասավ 155-ի, բայց կոնկուրսը էլի մեծ է, մեկ տեղի համար՝ 3,8 մարդ (մերժվել է Էդուարդ Մաղաքյանի, Խաչատուր Սուքիասյանի եւ եւս երեքի թեկնածությունների գրանցումը՝ թերի փաստաթղթեր ներկայացնելու պատճառաբանությամբ):

Ի դեպ, ինչպես եւ սպասվում էր, ԿԸՀ-ն ՀԱԿ համամասնական ցուցակից նույնպես հանեց Խաչատուր Սուքիասյանի անունը՝ միեւնույն պատճառաբանությամբ, այն է՝ 5 տարի անընդմեջ Հայաստանում չբնակվելու: Երեւում է՝ ՀԱԿ-իշխանություն մենաշիրույթում քաղաքական որոշում կա ոչ թե Սուքիասյանին, այլ ՀԱԿ-ից մեկ ուրիշ տնտեսագետի համար Ազգային ժողով մտնելու կանաչ լույս վառել:

Այսպիսով 1038 մարդ համամասնական կարգով է մասնակցելու ընտրություններին, 155 մարդ մեծամասնական կարգով՝ չենք տխրելու:

Երեկ ակտիվ էին «Ժառանգություն» ու «Ազատ դեմոկրատները», որոնց հայտարարություններում ընդդիմադիր ՀԱԿ-ի բոստանը նետվող քարեր կային: **Ալեքսանդր Արզումանյանն**, օրինակ, նշեց, թե ընդդիմադիր դաշտի որեւէ ուժի իրենց մրցակից չեն համարում (այ, եթե համագործակցության առաջարկ լինի՝ կհամագործակցեն), իրենց մրցակիցը կոալիցիան է: Եվ բացի այդ՝ եթե իշխանությունները կեղծեն ընտրությունները, նրանց հետ կոալիցիա կազմելը բացառվում է (ըստ այդ տրամաբանության՝ եթե իշխանությունները չկեղծեն՝ «Ժառանգություն» ու «Ազատ դեմոկրատները» կոալիցիա են կազմելու իշխանության հետ, բա որ նրանք չառաջարկե՞ն): Իսկ «Ժառանգության» վարչության փոխնախագահ **Ռուբեն Հակոբյանն** էլի ՀԱԿ-ին դասափետեց, թե մեծամասնական ընտրատարածքներում միասնական թեկնածուներ ունենալը ձախողեց՝ ոչ կառուցողական դիրքորոշում հանդես բերելով, եւ սեպեց, թե չի կարելի օրվա կեսը խոսել իշխանափոխության մասին, մյուս կեսը բանակցել իշխանության հետ՝ խորհրդարան գնալու համար: Չնայած՝ Տեր-Պետրոսյանը վերջին միտինգին ասել էր՝ «ոչ մի ձայն հանցավոր ռեժիմին»

## ԱՐՁԱԳԱՆՔ

# Երկակի «ստանդարտնե՞ր»

.«**Ազգի**» մարտի 29-ի համարի «Բյուրականյան «ընտրակրքեր» հրապարակման գլխավոր հարցին, թե ինչու տնօրենի ընտրությունները Բյուրականում երբեք նորմալ չեն ընթանում, հետագա ողջ շարադրանքը պարզ պատասխանում է: Բյուրականի աստղադիտարանի գիտական մթնոլորտը, աշխատակիցների վերաբերմունքը՝ խոհանոցային մանրամասներով թափանցիկ ներկայացված է, եւ ընթերցողի առաջ բացում է այսպիսի պատկեր՝ «Տարիներ շարունակ հետեւում եմ մեր կոլեկտիվի անդամների վարվելակերպին եւ զարմանում, որ նրանց ճնշող մեծամասնությանը չի հետաքրքրում աստղադիտարանի բարօրությունը կամ ընդհանուր շահերը: Եթե նրանք ոչինչ չեն անում աստղադիտարանի համար, ապա ինչ բարոյական իրավունք ունեն որեւէ բան պահանջելու:

...արդյո՞ք տնօրենը կամ տնօրենությունը պարտավոր են ամեն ինչ անել գիտաշխատողների համար, իսկ նրանք միայն օգտվեն հարմարավետ պայմաններից». եթե իրոք այդպես է, ինչո՞ւ են պահում նման գիտաշխատողների:

«Գիտխորհրդի աշխատանքի պասիվությունը բացատրվում է թե՛ տնօրենության լիբերալությամբ եւ թե՛ գիտխորհրդի, թե՛ ընդհանրապես աստղադիտարանի կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի իներտությամբ: Գիտխորհրդի ոչ մի անդամ ըստ էության չի աշխատում... Նրանց աշխատանքը միայն հանգում է գիտխորհրդի նիստերի մասնակցությանը: Կայացրած որոշումների մեծ մասը մնում է թղթի վրա». եթե այսպես է, ինչի՞ է պետք նման գիտխորհուրդը:

«...Ինչ վերաբերում է գիտական այլ ղեկավարներին, ապա այո, իրոք շատ դեպքերում նրանց է վերագրվում արդյունքների զգալի մասը՝ առանց նրանց էական մասնակցության»: Սա էլ գիտաշխատողների՝ հոդվածների պահանջվող քանակ ապահովելու մասին է:

Բյուրականի աստղադիտարանը գիտական հաստատություն է եւ այնտեղ գիտության մարդիկ են աշխատում: Ի՞նչ պատկերացում այսպիսի նկարագրությունից այս հիմնարկության մասին կարելի է կազմել: Տարօրինակ է, որ գիտության, գիտնականների մասին նման բացասական նկարագրություններով հարցազրույցի ավարտին բացասական վերաբերմունք է արտահայտվում աստղադիտարանի տնօրենի դոկտորական ատենախոսության մասին «**Ազգ**»-ում հրապարակված մեր անվանի երեք գիտնականների ստորագրությամբ բաց նամակին, գտնելով, որ նման «հրապարակումները կարող են լուրջ վնաս հասցնել մեր գիտության հեղինակությանը», այն պարագայում, երբ վերջինս վերաբերում էր ատենախոսության զուտ գիտական բնույթին, մակարդակին, չափանիշներին: Որտեղ մնաց բարոյական սկզբունքը: Այս տրամաբանությամբ, Բյուրականին ոչ գիտական աշխատանքային մթնոլորտի մասին առհասարակ պետք է որ չխոսվեր եւ չհրապարակվեր. ի՞նչ է, դա մեր գիտության կամ գիտական հիմնարկի հեղինակությունը չի վարկաբեկո՞ւմ: Իսկ եթե նկարագրված վիճակը համապատասխանում է իրականությանը, ապա այն պետք է բուժել, կարգավորել, եւ հրապարակայնացումը պետք է որ նպաստի դրան, նույնը վերաբերում է եւ վերոհիշյալ բաց նամակին:

Ի՞նչ է սա՝ երկակի «ստանդարտնե՞ր»:

Ս. Բ.

*Հ. Գ. Ինչ վերաբերում է «հանրային կարծիք» կոչվածին՝ ինքնախաբեությամբ չզբաղվելու համար ասենք, որ հանրային կարծիք, վերաբերմունք այսօր հնարավոր չէ ձեւավորել այսպիսի իներտ հասարակության կրթական եւ բարոյական առկա մակարդակի պայմաններում: Հենց միայն հանրային լսարանը, որ նրան կրթում եւ սնում է, չափազանց հեռու է բավարարելու նման պահանջը: Մարդկանց գերակշիռ մասը զբաղված է ինքնագոյության պահպանման կենցաղային խնդիրները լուծելով, իսկ մի փոքր մաս՝ տարված է կապիտալ կուտակելու մոլուցքով՝ դրա հաճախ բնազդային դրսեւորումներով: Մի խոսքով, մտքով, քակով աղքատ հասարակություն է: Պարզ խավ, մտավորական թե չինովնիկ, ստեղծված անառողջ մթնոլորտի, ընդհանուր օրգանիզմի մասնիկներն են, միեւնույն մենթալիտետի կրողը՝ տարբեր չափաբաժիններով (առանձին բացառություններ միշտ են եղել եւ հիմա էլ կան): Համատարած դժգոհության ու փախուստի տրամադրությունն են իշխում մեր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում:*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Զգուշացեք «Աստծո օթեւան» առաջարկողներից

Հայաստանում գրանցված կրոնական կառույցների թիվը 67-ն է, չգրանցվածներինը՝ կրկնակի շատ: Կրոնական այդ կառույցները փակ են: Գրանցվում են որպես հասարակական կազմակերպություն կամ կրթական որեւէ կենտրոն եւ սկսում իրենց քայքայիչ գործունեությունը: Հատկապես ընտրություններին ընդառաջ կրոնական կառույցներում նկատվում է լուրջ ակտիվություն: Կրոնական կառույցների ղեկավարները ձայների հետ կապված լուրջ ակտիվություն են ցուցաբերում եւ զբաղվում իրենց հետեւորդների ձայների առուծախով:

Ընտրությունների ժամանակ ակտիվություն են ցուցաբերում հատկապես բողոքավոր կրոնական կազմակերպությունները, այլ կերպ ասած՝ խարիզմատիկ եկեղեցիների ներկայացուցիչները: Հենց նրանք են համապատասխան գումարի դիմաց արդեն զոմբիացված հետեւորդների ձայները վաճառում: Քայքայիչ պաշտամունքներից տուժածների կենտրոնի ղեկավար **Ալեքսանդր Ամարյանի** ներկայացմամբ՝ գունավոր հեղափոխությունների գործընթացներում խարիզմատիկ եկեղեցական կառույցները եղել են շատ ակտիվ եւ լուրջ դերակատարություն են ունեցել: Վրաստանում «վարդերի հեղափոխության» ժամանակ ակտիվ դերակատարություն ուներ «Աստծո դեսպանատուն», իսկ Ուկրաինայում «նարնջագույն հեղափոխության» ժամանակ՝ «Հավատքի խոսք» կրոնական կառույցը: Վերոնշյալ կրոնական կառույցներից գործում են նաեւ Հայաստանում: «Կյանքի խոսք», «Աստծո զինվորներ» որոնք քայքայիչ ուղղվածություն ունեն:

Այս կազմակերպությունները գաղափարական առումով նույնն են, սակայն իրավաբանական ձեւակերպումն է այլ: Դա հատուկ խորամանկություն է, որ մեկի փակվելու կամ չգործելու պարագայում մյուսը շարունակի զոմբիացման գործընթացը:

Վերջին շրջանում մեծ աղմուկ հանած «Աստծո օթեւան» կրոնական կառույցը նույն խմբին է պատկանում: Կառույցը Հայաստանում սկսել է գործել 2008-ին: Ինչպես հաղորդում է կառույցի պաշտոնական կայքը, հիմնադիրը «եպիսկոպոս» Վահրամ Օհանյանն է, որը Հայաստանում է 80-ականների վերջերից: Նրա կարգադրությամբ նույն ժամանակահատվածում ԱՄՆ-ից Հայաստան են եկել Արթուր եւ Աննա Աղաջանյանները՝ դստեր՝ Մարիամի հետ, ովքեր ամեն կիրակի այստեղ իրականացնում են քարոզչություն եւ հարաբերություններ հաստատում այլ ավետարանական կառույցների հետ:

Հայաստանում այսօր կա 350.000 աղանդավոր: Մորմոնականներն ամենափոքր կառույցն են՝ ընդամենը 2700 հոգի: Եհովայի վկաների ու խարիզմատիկների թիվն ամենամեծն է: Նրանք շատ ակտիվ գործունեություն են իրականացնում, ինչը նպաստում է թվի աճին: Եթե մորմոնները երկրի ներսում որեւէ խնդրի չեն խառնվում եւ ստեղծված են հատուկ ամերիկյան շահերի սպասարկման համար, ապա նույնը չի կարելի ասել Եհովայի վկաների եւ խարիզմատիկ եկեղեցիների մասին:

Որ խարիզմատիկ եկեղեցիները, ինչպիսին է նաեւ «Աստծո օթեւանը», մարդկանց զոմբիացնելու առաքելություն ունեն, ապացուցվել է բազմիցս: Վերջերս ռուսական մամուլում տպագրվեց ռուսական հոգեբանական փորձագիտական եզրակացությունը, համաձայն որի՝ խարիզմատիկ եկեղեցու հետեւորդների մեծ մասը ստանում է հոգեկան շեղում: Այդ եկեղեցու հետեւորդները դառնում են մարդասպաններ կամ գործում ինքնասպանություն:

Ալեքսանդր Ամարյանը փաստում է, որ Հայաստանում նույնպես գրանցվել են բազմաթիվ ինքնասպանություններ, սպանություններ, որոնք կրոնական հողի վրա են կատարված եւ խարիզմատիկ եկեղեցուն բնորոշ սպանություններ են, սակայն Հայաստանում համապատասխան մասնագետների բացակայության պատճառով դրանք համարվում են կենցաղային սպանություն: «Սա մի հարց է, որ արդեն սպառնում է ազգային անվտանգությանը, ու անհրաժեշտ է համապատասխան միջոցներ ձեռնարկել, նրանց դեմ գրագետ պայքար սկսելու համար, ինչը չի արվում եւ բացասական ազդեցություն է ունենում»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Հանդիպում ՀԴԿ գրասենյակում

Ապրիլի 2-ին Հայաստանի դեմոկրատական կուսակցության կենտրոնական գրասենյակում տեղի ունեցավ կուսակցության ղեկավար Արամ Գ. Սարգսյանի ու ՀԴԿ ներկայացուցիչների հանդիպում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության՝ Ռադմիլա Շեկերինսկայայի գլխավորած խմբի հետ:

Կարեւորելով դիտորդական առաքելությունը, քննարկվեցին ընտրությունների հետ կապված երկկողմ համագործակցության, հնարավոր ընտրակեղծիքներին համազոր արձագանքելու, դրանց դեմ պայքարի, ինչպես նաեւ կուսակցության ակնկալիքների եւ պատրաստվածության վերաբերյալ խնդիրներ:

Կողմերը հույս հայտնեցին, որ Հայաստանի Հանրապետության 2012 թ. խորհրդարանական ընտրությունները կանցնեն ազատ եւ թափանցիկ՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

ՀԴԿ լրատվական ծառայություն

# ԿԸՀ-ն սահմանեց անվճար եւ վճարովի քարոզչաժամանակը հանրային հեռուստառադիոեթերում

Հանրային հեռուստատեսությունը ապրիլի 8-ից մինչեւ 22-ը ընտրություններին մասնակցող կուսակցություններին տրամադրելու է (Հ1 առաջին ալիքի եթեր, ողջ երկրի տարածքով մեկ հեռարձակում) նախընտրական քարոզչության 2 անվճար եւ մինչեւ 4 վճարովի րոպե, ապրիլի 23-ից մինչեւ 28-ը 2 անվճար եւ մինչեւ 5 վճարովի րոպե, ապրիլի 29-ից մինչեւ մայիսի 4-ը 3 անվճար եւ մինչեւ 5 վճարովի րոպե: Երեկ հրավիրած արտահերթ նիստում այսպիսի որոշում է կայացրել Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Հանրային ռադիոյով քարոզչությունը կիրականացվի. ապրիլի 8-ից 25-ը՝ օրը երկու անգամ՝ 2 անվճար, երկու անգամ՝ մինչեւ 3 վճարովի րոպե, ապրիլի 26-28-ը՝ երկուական անգամ 2 անվճար րոպե եւ մինչեւ 4 րոպե վճարովի րոպե, ապրիլի 29-ից մինչեւ մայիսի 4-ը՝ երկուական անգամ՝ 3 անվճար եւ մինչեւ 4 վճարովի րոպե (հեռարձակում ողջ երկրի տարածքով):

Ս. Խ.

# Մերոնք Բաքվում

Ապրիլի 1-4-ը Բաքվում նախատեսված էր Արեւելյան գործընկերության շրջանակում գործող «Եվրոնեսթ» խորհրդարանական վեհաժողովի երկրորդ նստաշրջանը: Հայաստանի խորհրդարանական պատվիրակությունը որոշում էր կայացրել մասնակցել վեհաժողովին եւ ապրիլի 1-ին այդ նպատակով մեկնել է Բաքու:

Ըստ Ազգային ժողովի կայքի՝ պատվիրակության կազմում են ԱԺ պատգամավորներ Վահան Հովհաննիսյանը (պատվիրակության ղեկավար), Արտակ Զաքարյանը, Նաիրա Զոհրաբյանը, Լիլիթ Գալստյանը, Խաչիկ Պետրոսյանը, Ստյոպա Սաֆարյանը, Հովհաննես Սահակյանը, Արամ Սաֆարյանը, Մանվել Բադեյանը, պատասխանատու քարտուղար Կարինե Շիմշիրյանը: Մինչ Բաքու մեկնելը պատվիրակության՝ ԵԺԿ-ին անդամակցող խորհրդարանական կուսակցությունների ներկայացուցիչ-անդամները Արտակ Զաքարյանը, Ստյոպա Սաֆարյանը եւ Հովհաննես Սահակյանը Թբիլիսիում մարտի 30-31-ին հանդիպել են Եվրոպական ժողովրդական կուսակցության ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում նախապատրաստական քննարկումներ են անցկացվել Բաքվում կայանալիք «Եվրոնեսթ» ԽՎ-ի լիագումար նիստի աշխատանքների վերաբերյալ:

Տեղեկատվական կայքերում եւ սոցիալական ցանցերում արված հրապարակումներից երեկ կարելի էր եզրակացնել, որ առայժմ որեւէ միջադեպ մեր պատվիրակության հետ կապված տեղի չի ունեցել: ՀՀԿ-ից **Հովհաննես Սահակյանը** վկայել էր, թե ադրբեջանական կողմը անվտանգության բոլոր միջոցները ձեռնարկել է, առայժմ թշնամական դրսեւորումներ չեն եղել: Երեկ տեղի էին ունենում տնտեսական եւ էներգետիկ, ինչպես նաեւ քաղաքական հանձնաժողովների նիստերը (վերջինի նիստին ելույթով հանդես է եկել Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը), այսօր լիագումար նիստն է մեկնարկել: Հիշեցնենք, որ Երեւանում տեղի էր ունեցել «Եվրոնեսթի» սոցիալական հանձնաժողովի նիստը, որին Ադրբեջանի ներկայացուցիչները եւս մասնակցել էին:

ՀՀ խորհրդարանական պատվիրակությունը Երեւան կվերադառնա ապրիլի 5-ին:

Ս. Խ.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՅԱՆՔ

# Երթուղային նոր ցանցը հիմա էլ այս աշնանը

*Պաշտոնյաները շարունակում են ժամկետներ խոստանալ, հետո մոռանալ դրանք*

**Երեւանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցը վերջապես հրապարակվեց: Դա կարելի է համարել դարակազմիկ իրադարձություն, քանի որ վերջին 5-6 տարիներին մայրաքաղաքի բոլոր քաղաքապետներն ու տրանսպորտի վարչության պետերը պարբերաբար հայտարարում էին, որ շուտով պատրաստ կլինի նոր երթուղային ցանցը եւ մենք կերջանկանանք դրանով, բայց պետությունը միջոցներ էր տրամադրում, ցանցը մշակվում էր, ապա մնում թղթի վրա:**



**Այս ցանցի մասին առայժմ չենք ցանկանում որեւէ կարծիք հայտնել առանց մանրամասներին ծանոթանալու: Իհարկե դրական է, որ ավտոբուսների թիվն ավելանալու է, եւ մենք ավելի քիչ կերթեւեկենք միկրոավտոբուսներում խցկված՝ նվաստացնելով մեր մարդկային արժանապատվությունը՝ աշխատանքի կամ տուն հասնելու համար: Սակայն, պարզվում է, դեռ առնվազն մինչեւ նոյեմբեր պետք է սպասենք, որ նոր ցանցը գործի, ավտոբուսներն ավելանան: Իսկ թե նախանշված ժամկետն ինչքանո՞վ կյանքի կկոչվի, դա էլ հարց է:**

**Երեւանի նախկին քաղաքապետ Կարեն Կարապետյանը հայտարարում էր, որ երթուղային ցանցը կսկսի գործել աշնանը, այսինքն՝ անցյալ տարվա աշնանը: Տարոն Մարգարյանն էլ հայտարարում է, որ այս աշնանը: Առաջիկայում ընտրություններ են՝ լի զանազան ստորջրյա խութերով: Իսկ ո՞վ կարող է երաշխավորել, որ մինչեւ աշուն ամեն ինչ կընթանա նախանշվածի պես, եթե քաղաքական բուռն իրադարձություններ չունեցող շրջանում նախատեսված ժամկետները չեն կատարվում, ապա հիմա, թվում է, առավել եւս չեն կատարվի: Հետեւաբար, դեռ վաղ է ուրախանալ նոր ավտոբուսներով եւ նոր երթուղային ցանցով, իսկ պաշտոնյաներին էլ խորհուրդ կտանք դադարեցնել ժամկետներ խոստանալ եւ հետո մոռանալ դրանց մասին: Եվ դա միայն տրանսպորտին չի վերաբերում. իրացման աշխատանքների ձգձգում գերակա շահ ճանաչված տարածքներում, կոնկրետ տարածքներում կանաչապատման, բակային տարածքների վերանորոգման աշխատանքների փոխանցում մի տարվանից հաջորդ տարի եւ այլն:**

Ա. Ս.

# Մաքուր ջրի արտադրության ազգային առանձնահատկությունները

**«ՄԳԱ ՎՈԹԸՐ» ընկերությունը (ապրանքային նշանը «Մաքուր ջուր») հայտարարություն էր տարածել տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի որոշման կապակցությամբ, համաձայն որի՝ ընկերությունը անբարեխիղճ մրցակցության համար տուգանվել էր հասույթի 1 տոկոսի չափով: Հիշեցնենք, պատճառն այն էր, որ «Մաքուր ջրի» շշալցման ժամանակ օգտագործվում է ոչ թե լեռնային աղբյուրի, այլ քաղաքային սովորական ջրամատակարարման ցանցի ջուր:**

**Ընկերության տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ իր կողմից առաջարկվող «բնական աղբյուրի խմելու ջուրն ուղղակիորեն լեռնային աղբյուրից է, այլ ոչ թե աղբյուրից դուրս եկող եւ ջրամատակարարման ցանցով առաքվող»: Ըստ «ՄԳԱ ՎՈԹԸՐ»-ի՝ «Մեր ընկերությունը, հայտարարելով, որ իր առաջարկած ջուրը բնական աղբյուրի խմելու ջուր է, այդպիսով մատնանշում է շշալցման ժամանակ օգտագործվող ջրի իրական ծագումը, այն է՝ Գառնիի տարածքում բխող աղբյուրների ջուրը, որը մինչ շշալցվելը ենթարկվում է վերամշակման՝ համապատասխան խմելու ջրի ՀՀ եւ միջազգային չափանիշներին: Այդ տեղեկությունը միշտ բաց է եղել եւ միշտ փոխանցվել է մեր սպառողներին»:**

**Սրան հաջորդում է ընկերության հաղորդումը, որ իրենք պատրաստ են դիմել դատարան՝ բողոքարկելու հանձնաժողովի որոշումը, որ իրենց մրցակիցները թյուրիմացության մեջ են գցում իրենց սպառողներին, ապա չգիտես ինչու հիշատակվում է, որ ընկերությունը մասնակցում է UNICEF-ի մանկական առողջապահական ծրագրին:**

**Փաստորեն, դատելով ընկերության պարզաբանումից, լեռնային աղբյուրի ջրի արտադրությունը ամենեւին էլ պարտադիր չէ, որ լինի աղբյուրի մոտ: Այն կարելի է կազմակերպվել նաեւ, ենթադրենք, բնակարանում, գարաժում, սեփական այգում եւ այլն: Սա ոչ թե ծիծաղելի է, այլ պարզապես զավեշտ: Պատկերացնո՞ւմ եք, եթե հանկարծ պարզվի, որ ենթադրենք՝ աշխարհահռչակ «Էվիան» խմելու ջուրն արտադրող ընկերությունը այն շշալցնում է ոչ թե Ժնեւ լճի ափին գտնվող աղբյուրից, այլ Ժնեւ քաղաքի բնակարաններից մեկում, հետո էլ հայտարարի, թե ի՞նչ տարբերություն, թե որտեղ է շշալցնում՝ քաղաքի բնակարանո՞ւմ, թե՞ աղբյուրի մոտ, կարեւորը, որ նշվում է, թե որ աղբյուրից է: Անշուշտ, դժվար է ենթադրել նման իրավիճակ: Իսկ «Մաքուր ջուր» արտադրողի լավագույն քայլը կլիներ իր սպառողներից ներողություն խնդրելը, այլ ոչ թե ստվերային շրջանառության հաշվին ստացած գերշահույթներից UNICEF-ի մանկական ծրագրին փոխանցվող գումարները երեսով տալը: Թե ինչպե՞ս կարելի է բնորոշել նման գործելակերպը՝ թողնում ենք ընկերության հայտարարությունը կարդացողներին:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱԶԳ

## Գիտական

# Դարձյալ Լեսթերի համալսարանի հետազոտական ծրագրի մասին

Հետաքրքրությամբ կարդացի քաղաքագետ Սուրեն Մովսիսյանի հարցազրույցը Լեսթերի համալսարանի հետազոտական ծրագրի վերաբերյալ, որը տպագրվել էր «**Ազգ**» օրաթերթի #49, 20-03-2012 համարում: http://azg.am/AM/2012032017

Համաձայն լինելով «Խոջալու. Իրավական վերլուծություն» հետազոտական ծրագրի կողմնակալության վերաբերյալ պրն Մովսիսյանի գնահատականներին, պետք է նշեմ, որ ինքս էլ հանդիսացել եմ ծրագրի դիմումատու եւ նույնպես մերժվել եմ՝ առանց հարցազրույցի եւ, ամենակարեւորը, առանց պատճառաբանության:

Ինչպես եւ շատերը, Լեսթերի հետազոտական ծրագրի մասին տեղեկացել էի բրիտանական www.jobs.ac.uk կայքից եւ միանգամից որոշել էի դիմել, մի քանի պատճառով: Դրանցից գլխավորը թերեւս այն է, որ ներկայումս ծրագրում եմ հետդոկտորական հետազոտություն անել, թե ինչպես է հակամարտության ընթացքում տեղի ունեցող որեւէ զարգացում, պատահար կամ միջադեպ վերափոխվում եւ հետպատերազմյան շրջանում դառնում քաղաքական գործիք թշնամու կերպար կառուցելու կամ ամրապնդելու ու զարգացնելու համար: Քանի որ ակադեմիական հետաքրքրություններս տարատեսակ են, բայց շրջանառվում են կոնֆլիկտի հոգեբանության եւ դրա առանձնահատկությունների շուրջը, արդեն իսկ հասցրել եմ այդ առումով ուսումնասիրել Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետպատերազմյան փուլը, որը ասածիս վառ օրինակ է՝ պատերազմական շրջանի զարգացումների քաղաքական կիրառման տեսանկյունից: Եվ քանի որ Լեսթերի համալսարանի հիշյալ հետազոտական ծրագիրը նախատեսում էր ուսումնասիրել այդ պատերազմի ամենամութ էջերից մեկը, որը միեւնույն ժամանակ վերջին տարիներին Ադրբեջանի կառավարության կողմից օգտագործվում է միջազգային հակահայ քարոզչության համար, մասնակցության դիմում ներկայացնելու որոշման կայացումը շատ կարճ տեւեց:

Հաշվի առնելով այս կուտակված փորձառությունը, դիմել էի այդ հետազոտական ծրագրին, որովհետեւ վստահ եմ, որ նախ ղարաբաղյան պատերազմի այդ էջերը դեռ բավականին ուսումնասիրված չեն, եւ հետո՝ միջազգային ակադեմիական շրջանակների կողմից այդ թարմ պատմական իրադարձությունների օբյեկտիվ եւ համակողմանի ուսումնասիրությունը բխում է թե՛ իմ անձնական ակադեմիական հետաքրքրություններից, թե՛ մեր ընդհանուր շահերից, որպես խաղաղասեր պետություն եւ ազգ: Դիմումիս հիմնական պատճառներից պետք է նաեւ նշեմ այդ ծրագրի նպատակների եւ հետազոտության առարկայի նկարագրության անհեթեթությունը, որը դեռ այն ժամանակ կողմնակալության հետ կապված կասկածներ էր հարուցել, որոնք հուսով էի ցրել իմ ակտիվ մասնակցությամբ: Օրինակ. որեւէ ակադեմիական ուսումնասիրություն չի կարող նույնիսկ դիտարկվել նորմալ համալսարանի կողմից, եթե առկա չէ նպատակի եւ առարկայի նկարագրությունը: Այս առումով, հայտարարության մեջ որեւէ ակնարկ չկա, թե ինչու 1988-1994 թթ. հակամարտության եւ 1992-1994 թթ. պատերազմի բազում դրվագներից, որոնցից մի քանիսը ակնհայտ ներառում են պատերազմական հանցագործության տարրեր (օրինակ՝ 1992 թ. ապրիլին Մարաղայի ոճրագործությունը՝ հայկական խաղաղ գյուղի եւ դրա խաղաղ բնակչության ոչնչացմամբ), ընտրվել է հենց Խոջալուի իրադարձությունը, որի մասին նույնիսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը չկարողացավ որեւէ կոնկրետ, որոշիչ կարծիք հայտնել լրագրող Ֆաթուլաեւի գործում: Ավելին, վստահ եմ, որ այդ հետազոտությունը արդեն իսկ ունի կանխակալություն, քանի որ հետազոտության առարկա է վերցրել ընդհանուր կոնֆլիկտից կտրված մի միջադեպ՝ առանց նախապատմության կամ պայմանների քննության: Նույնիսկ սա քողարկելու համար Լեսթերի համալսարանը պետք է մի հետազոտողի էլ Ադրբեջանից հրավիրեր, ինչը ընդհանրապես չի արվել: Մի՞թե Լեսթերի Իրավունքի դպրոցը մի քանի տասնյակ հազար ֆունտի համար պատրաստ է «վճարել» իր համբավով ու հեղինակությամբ:

Ինչպես արդեն նշեցի, ծրագրի կոորդինատոր Փոլ Բեհրենսից դեռ մարտի սկզբին մերժման նամակ եմ ստացել: Ինչպես հասկացա Սուրեն Մովսիսյանի հարցազրույցից, առանց նույնիսկ հարցազրույցի հրավիրման այդ մերժումը պատահական չէ:

Ծրագիրը, բրիտանական իմ աղբյուրների համաձայն, համաֆինանսավորվում է Լոնդոնում գործող «Ադրբեջանի եվրոպական բարեկամներ» հասարակական կառույցի կողմից, որի ղեկավարն է Ադրբեջանի արտակարգ իրավիճակների նախարար Ք. Հեյդարովի որդին, եւ որի մասին մամուլում, այդ թվում՝ բրիտանական, հաճախ հրապարակվում են սկանդալային նորություններ, կապված նաեւ բրիտանացի պատգամավորների կաշառելու հետ: Վերջին դրվագով ամենաաղմկոտ սկանդալը երեւի լիբերալ-դեմոկրատ Մայք Հենքոքի հետ կապված միջադեպն էր, ում օգնականը նաեւ, պարզվեց, ռուսական լրտես է:

Այս լոբբիստական կառույցից ֆինանսավորում ստանալու հանգամանքը իմ կարծիքով զգալիորեն վնասում է թե՛ այս հետազոտության արդյունքների անկողմնակալությանը եւ գիտականությանը, թե՛ Լեսթերի համալսարանի ակադեմիական համբավին: Որքան զարմանալի է, որ նման բարձրակարգ համալսարանը ներքաշված է այս կարգի բացահայտ քաղաքական նպատակ հետապնդող ծրագրում:

Հետաքրքիր է նաեւ ծրագրի ղեկավար դ-ր Բեհրենսի գործունեությունը: Նախ, դատելով Լեսթերի համալսարանի կայքում առկա նրա հրապարակումների ցանկից՝ դ-ր Բեհրենսը երբեւիցե չի զբաղվել ղարաբաղյան հակամարտության հետ կապված գիտական հետազոտություններով: Նրա հրապարակումները վերաբերում են միջազգային դիվանագիտական իրավունքին, մարդու միջազգային իրավունքներին (հատկապես՝ միասեռականների իրավունքներ, կրոնի եւ խոսքի ազատություն), ցեղասպանության քրեական իրավունքին (Criminal Law of Genocide): Հետաքրքրական է, որ 2007 թ. հրատարակված «Քրեական իրավունքը ցեղասպանության մեջ» գրքում, որը դ-ր Բեհրենսը խմբագրել է պրոֆ. Ռալֆ Հենհեմի հետ (Ralph Henham, Paul Behrens, The Criminal Law of Genocide, Ashgate 2007), ներկայացված են երկու հոդվածներ հայերի 1915 թ. ցեղասպանության մասին, ընդ որում դրանցից մեկը փորձ է անում հիմնովին ժխտել օսմանյան Թուրքիայի իրականացրած ցեղասպանության պատմական փաստը: Իհարկե, կարծում եմ, դ-ր Բեհրենսը կարող է արդարանալ, որ պահպանել է «ակադեմիական օբյեկտիվություն», ներկայացնելով պատմական իրադարձության թե՛ կողմ, թե՛ դեմ տեսակետները, բայց աշխարհի առաջավոր երկրների գիտնականները, միջազգային համբավ ունեցող ցեղասպանագետները «1915 թ.» մասին աշխատություններում «խոսքի ազատության» վկայակոչմամբ ցեղասպանության ժխտմամբ չեն զբաղվում: Ավելին, այս հարցի վերաբերյալ «խոսքի ազատությունը», ինչպես ցույց տվեցին Ֆրանսիայի օրենսդիրում քննարկումները, չպետք է օգտագործվի ցեղասպանության ժխտման համար:

Հաշվի առնելով այս ամենը, պատրաստակամ եմ եւ առաջարկում եմ պրն Սուրեն Մովսիսյանին համագործակցել այս հարցում, եւ համատեղ ուժերով ոչ միայն անդրադառնալ կայանալիք հետազոտության հուսով եմ հրապարակվելիք արդյունքների ակադեմիական քննությանը, այլեւ նախաձեռնել սեփական հետազոտություն՝ ղարաբաղյան կոնֆլիկտի ընթացքում բոլոր պատերազմական հանցագործությունների համակողմանի ուսումնասիրության եւ միջազգային փորձի հիման վրա՝ դրանց գնահատականի եւ համարժեք վերլուծության նպատակով:

Այս գործում, վստահ եմ, կլինեն նաեւ այլ համախոհ գիտնականներ:

ՄԻՔԱՅԵԼ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

---

ԵՊՄՀ 90-ԱՄՅԱԿ

# Ֆրանկոֆոնիային նվիրված միջազգային գիտաժողով մանկավարժական համալսարանում

Ամեն տարի մարտ ամսին աշխարհում նշվում է ֆրանկոֆոնիայի (ֆրանսախոսության) միջազգային տոնը, որի նպատակն է խրախուսել եւ խթանել ֆրանսախոսության զարգացումը եւ ֆրանկոֆոն արժեքների տարածումն աշխարհում, այն է՝ համերաշխություն, արժանապատվություն եւ ժողովուրդների բարեկամություն: Սա է ֆրանկոֆոնիայի զարգացման հիմնական առաքելությունը, եւ այս առաքելության իրականացման գործում իր անհերքելի ավանդն ունի Հայաստանը: 2009 թվականից լինելով Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ՝ Հայաստանն առավել եռանդով է մասնակցում ֆրանկոֆոնիայի միջազգային օրերին նվիրված տոնակատարություններին:

Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ապրիլի 2-ին մեկնարկեց միջազգային գիտաժողով՝ նվիրված օտար լեզուների դասավանդման խնդիրներին:



Գիտաժողովի բացման խոսքում մանկավարժական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր **Ռուբեն Միրզախանյանը** ողջունեց ներկաներին եւ հատուկ շնորհակալություն հայտնեց արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանին, որը ներկա էր գիտաժողովի բացմանը: «Հայ-ֆրանսիական միջպետական հարաբերությունները ֆրանկոֆոնիայի ձեռնարկներով նոր ընդգրկուն շրջանակ կստեղծեն հետագա հարաբերությունների համար: Այս շրջանակում իրականացվող ձեռնարկները մեր երկրում իրապես կնպաստեն ավելի մեծ գիտական, ուսումնական հաստատությունների մասնակցությանը նման միջոցառումներին», ընդգծեց ռեկտորը:

Այնուհետեւ գիտաժողովի մասնակիցներին եւ ներկաներին ֆրանսերեն լեզվով ողջունեց Հայաստանի արտաքին գործերի նախարար **Էդվարդ Նալբանդյանը**: «Հայաստանում բարի ավանդույթ են դարձել ֆրանկոֆոնիային նվիրված ամենատարբեր բնույթի միջոցառումները, այդ թվում՝ գիտաժողովները:

Ֆրանկոֆոնիան նպաստում է տարբեր մայրցամաքներում ապրող, սակայն նույն արժեքները դավանող ժողովուրդների մերձեցմանն ու մշակութային առավել սերտ համագործակցությանը: Մենք մեծ ուշադրություն ենք դարձնում եւ կարեւորություն տալիս միջմշակութային հարաբերություններին եւ ամեն կերպ թույլ չենք տալիս որպեսզի տեղի ունենան մշակութային բախումներ», ելույթում ընդգծեց արտգործնախարարը, որը երկար տարիներ Ֆրանսիայում ՀՀ դեսպանն էր:

Նախարարը նկատեց նաեւ, որ Հայաստանը կարեւորում է իր մասնակցությունը միջմշակութային երկխոսության ֆորում հանդիսացող ֆրանկոֆոնիային, քանզի համոզված է, որ այն ընձեռում է առավել սերտ փոխճանաչելիության եւ համագործակցության հնարավորություններ:

Գիտաժողովի բացման խոսքով հանդես եկավ նաեւ ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոն:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ-ի սոցիալական կրթության ակադեմիայի անդամ, Մոսկվայի «Եվրոպրոցի» գիտահետազոտական կենտրոնի գլխավոր տնօրեն **Վիկտորիա Սաֆոնովան** ներկայացրեց «Համաշխարհային գաղափարական ուղղվածությունները եւ ազգային գերակայությունները 21-րդ դարի բազմամշակույթ լեզվական կրթության զարգացման գործընթացում» թեմայով զեկուցում:

Այնուհետեւ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ֆրանսերեն լեզվի ամբիոնի վարիչ **Արամ Բարելիզյանը** խոսեց «Լեզվական փոխներթափանցումը եւ ֆրանսերենի դասավանդման խնդիրները» թեմայով, ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան լեզվական կցորդ Ֆաբիեն Նեյրան ներկայացրեց «Ֆրանսերենի դրվածքը Հայաստանում» զեկույցը, իսկ վերջում «Գեղարվեստական թարգմանությունը որպես մշակույթների փոխհարստացման միջոց» թեմայով ընդգրկուն զեկույց ներկայացրեց բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների մասնագիտական ուսուցման ամբիոնի վարիչ **Դոնարա Ղազարյանը**:

«Այսօր օտար լեզուները մենք դասավանդում ենք միջմշակութային հաղորդակցության միջոցով, լեզուների դասավանդման գործընթացում առաջին շեշտը դրվում է դրա վրա. սա մշակութային երկխոսություն է, փոխհարստացում, նաեւ փորձի փոխանակում», ասաց Դոնարա Ղազարյանը: Վերջինս անդրադառնալով օտար լեզուների դասավանդման առջեւ ծառացած խնդիրներին՝ ասաց. «Անհրաժեշտ է դասավանդման նոր մոտեցումներ ցուցաբերել, ունենք նաեւ դասագրքերի եւ նյութերի մշակման խնդիր. դպրոցներում խիստ կարիք կա ֆրանսերեն լեզվի լավ դասագրքերի, որոնք էլ փորձում ենք բերել արտերկրից եւ Ֆրանսիայից»:

Գիտաժողովին ներկա էին ֆրանկոֆոն մյուս երկրների դեսպանները, հյուրեր, դասախոսներ եւ ուսանողներ:

Գիտաժողովը նվիրված էր Մանկավարժական համալսարանի 90-ամյակին:

ՍՈՆԱ ԱՐԱՄՅԱՆ

# Սիրիական ընդդիմությունն ԱՄՆ-ից կստանա եւս 12 մլն դոլար

*«Սիրիայի բարեկամների» հանդիպումը*



ԱՄՆ-ը կրկնապատկում է սիրիացի ընդդիմադիրներին հատկացվող ֆինանսական օգնությունը: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը, վկայակոչելով պետքարտուղար Հիլարի Քլինթոնին: Շուտով սիրիացի ապստամբները ԱՄՆ-ից կստանան 12 մլն դոլար լրացուցիչ օգնություն: Դա հայտնի դարձավ Ստամբուլում կիրակի օրն անցկացված «Սիրիայի բարեկամների» հանդիպման ժամանակ:

«Սիրիայի բարեկամների» խմբի մասնակից վեց տասնյակ երկրների ներկայացուցիչների հաջորդ հանդիպումը տեղի կունենա Փարիզում առաջիկա երկու շաբաթվա ընթացքում: Խումբը հանդես է գալիս Սիրիայում վարչակարգի փոփոխման օգտին: Ստամբուլի հանդիպման ժամանակ հիմնվել է աշխատանքային խումբ, որը պետք է նոր պատժամիջոցներ մշակի Բաշար Ասադի վարչակարգի դեմ:

Հանդիպման ժամանակ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը հույս է հայտնել, որ ավելի խիստ պատժամիջոցները Ասադին կստիպեն երկրում դադարեցնել արյունահեղությունը:

Ներկայումս ԱՄՆ-ը սիրիացի ապստամբներին օգնում է ոչ միայն ֆինանսապես, այլեւ տեխնիկապես. մատակարարվող կապի միջոցները ապստամբներին թույլ կտան համակարգել իրենց գործողությունները եւ կապ պահպանել արտաքին աշխարհի հետ:

Ռուսաստանը չէր մասնակցում «Սիրիայի բարեկամների» հանդիպմանը: Մոսկվան կասկածներ ունի, որ «Սիրիայի բարեկամների» խումբը հող է նախապատրաստում օտարերկրյա միջամտության համար: Միեւնույն ժամանակ Մոսկվան խոստացել է «ըստ ամենայնի աջակցել» Սիրիայի գծով ՄԱԿ-ի եւ Արաբական լիգայի հատուկ ներկայացուցիչ Կոֆի Անանին:

Մարտի 27-ին Սիրիայի նախագահ Բաշար Ասադը համաձայնեց Կոֆի Անանի առաջարկած խաղաղ կարգավորման ծրագրին: Վերջինս ենթադրում է կրակի դադարեցում, մարդասիրական կազմակերպությունների մուտք Սիրիայի բոլոր շրջաններ եւ վերահսկողության մեխանիզմի ստեղծում:

# Տիմոշենկոյին կարող են փոխանակել Ազատ առեւտրի գոտու հետ

*Նրան թույլատրեցին բուժվել գաղութից դուրս*



Իրավասությունների վերազանցման մեղադրանքով 7 տարվա բանտարկության դատապարտված Ուկրաինայի նախկին վարչապետ Յուլիա Տիմոշենկոն Խարկովյան գաղութից կարող է տեղափոխվել Բեռլինի «Շարիտե» կլինիկա, որի գլխավոր բժիշկ Կառլ Մաքս Այնհոյըը փետրվարի կեսերին հայտարարել էր Տիմոշենկոյի ողնաշարային խնդիրների մասին:

Sueddeutsche Zeitung թերթը գրում է նախագահ Յանուկովիչի վարչակազմի եւ կանցլեր Մերկելի գերատեսչության անմիջական բանակցությունների մասին: Դա հաստատում են նաեւ հիվանդանոցում եւ Ուկրաինայի գլխավոր դատախազությունում: Ի դեպ, Ուկրաինայի պաշտոնական աղբյուրները եւ եվրոպացի բժիշկները տարբեր ձեւով են գնահատում Տիմոշենկոյի առողջական վիճակը:

Բանակցությունները նախաձեռնել է գերմանական կողմը, որը Տիմոշենկոյի դատավարությունը համարում է քաղաքական: Միայն հասկանալի չէ, թե նա ինչպիսի կարգավիճակում կարող է գտնվել Գերմանիայում:

Ուկրաինայի գլխավոր դատախազությունում նշել են, որ հարկ կլինի փոփոխել օրենսդրությունը, որպեսզի կալանավորները կարողանան բուժվել արտասահմանում:

Բայց գերմանացիներն ունեն Կիեւի վրա ճնշում գործադրելու միջոցներ: Der Stern հանդեսը եւ Die Welt թերթը գրում են, որ շուտով ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունն է, եւ Ուկրաինային դրական տեղեկատվական ֆոն է պետք նման իրադարձության համար: Բացի դրանից, անցյալ ուրբաթ վերջնականապես հաստատվեց ԵՄ-ի հետ Ուկրաինայի ընկերակցության նոր համաձայնագրի տեքստը, որը նախատեսում է Ազատ առեւտրի գոտու ստեղծում: Կիեւում, իհարկե, խիստ շահագրգռված են, որ եվրոպացիները հիմա ստորագրեն փաստաթուղթը: Այնպես որ Տիմոշենկոյի հարցում զիջողամտություն ակնկալելու բոլոր հիմքերն առկա են:

Երեկ հետմիջօրեին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդեց, որ Ուկրաինայի գլխավոր դատախազ Վիկտոր Պշոնկան «գործող օրենսդրության շրջանակներում» թույլատրել է Տիմոշենկոյի բուժումը գաղութից դուրս գտնվող մասնագիտացված որեւէ բուժհիմնարկում:

# Հունգարիայի նախագահը հրաժարական տվեց

Հունգարիայի նախագահ Պալ Շմիտը երեկ վայր է դրել նախագահական լիազորությունները, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը: Հրաժարականի պատճառը դոկտորի գիտական աստիճանից զրկվելն է գրագողության մեղադրանքով: Օրերս «**Ազգը**» գրել էր այդ մասին:

«Սահմանադրության համաձայն, նախագահը պետք է ներկայացնի հունգար ազգի միասնությունը: Ցավոք, ես դարձա տարաձայնությունների խորհրդանիշ», մասնավորապես ասել է Շմիտը իր ելույթում:

Ուրբաթ օրը նա մերժել էր իր պաշտոնաթողության գաղափարը, ասելով, թե իր թեզի հետ կապված միջադեպը տեղի է ունեցել 20 տարի առաջ: Ավելի վաղ գրագողության մեղադրանք ներկայացրած HGV հանդեսը գրել էր, որ Պալ Շմիտի՝ օլիմպիական խաղերի ծրագրին նվիրված 215 էջանոց թեզի ավելի քան 200 էջը կազմում են ուրիշ հեղինակների գործերից այս կամ այն ձեւով առնված հատվածները:

ՊԱՐՏՔԻ ԴԻՄԱՑ

# Իրաքյան Քրդստանը դադարեցրել է նավթի արտահանումը



**Իրաքյան Քրդստանը ապրիլի 1-ից լիովին դադարեցրել է նավթի արտահանությունը: Շրջանային իշխանությունները Բաղդադի կենտրոնական կառավարությանը մեղադրում են այն բանում, որ նրանք տեղական ընկերություններին գումար չեն փոխանցել արդեն մատակարարված նավթի դիմաց: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**Քրդական իշխանությունների հաշվարկների համաձայն, Բաղդադը երկրի հյուսիսային՝ քրդաբնակ շրջաններին պարտք է մոտ 1,5 մլրդ դոլար: Քրդերը պնդում են, որ Իրաքի իշխանությունները նավթի դիմաց չեն վճարել 2011-ի մայիսից, իսկ դրանից առաջ կատարվել է երկու վճարում 514 մլն դոլար ընդհանուր գումարով:**

**Իրաքի նավթային նախարարությունում Քրդստանի գործողություններն առայժմ չեն մեկնաբանում: Ավելի վաղ Բաղդադում հայտարարել էին, թե հավանություն են տվել քուրդ մատակարարներին 560 մլն դոլարի վճարմանը եւ սպասում են տվյալների վերջնական ստուգմանը:**

**Մարտի վերջերին Քրդստանը արդեն կրճատել էր նավթի արտահանության ծավալը, օրական 70-75 հազար բարելից իջեցնելով 50 հազարի:**

**Քրդական իշխանությունները եւ Իրաքի կենտրոնական կառավարությունը մշտապես վիճում են անմիջականորեն Քրդստանի հետ նավթարդյունաբերողների կնքած համաձայնագրերի օրինականության շուրջը: Սադդամ Հուսեյնի վարչակարգի տապալումից հետո Իրաքում օրենք ընդունվեց նավթի հետախուզման եւ արդյունահանման կենտրոնացման վերաբերյալ, որը նահանգներին արգելում է համաձայնագրեր կնքել նավթարդյունահանող ընկերությունների հետ: Սակայն 2009-ի մայիսին Բաղդադը քրդերին այնուամենայնիվ թույլատրեց արտահանել իրենց ենթակա հանքավայրերի նավթը: Անցյալ տարվա նոյեմբերին Քրդստանի եւ Բաղդադի հարաբերությունները սրվեցին այն բանից հետո, երբ քրդական կողմը նավթարդյունահանման պայմանագիր ստորագրեց խոշորագույն նավթային ընկերության՝ ExxonMobil-ի հետ:**

# ATR-72-ի անկումից հետո գործ հարուցվեց «անվտանգության կանոնների խախտման» հոդվածով



Երեկ Տյումենի «Ռոշչինո» օդանավակայանից բարձրանալու պահին վթարվել եւ վայր է ընկել UTair ավիաընկերության ATR-72 օդանավը, որը թռչում էր Տյումենից Սուրգուտ:

ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ օդանավում եղել են 39 ուղեւոր եւ անձնակազմի 4 անդամ: Անչափահաս ուղեւորներ չեն եղել: Փրկարարական աշխատանքներն ավարտված են: Զոհվել է 32 մարդ (այդ թվում անձնակազմի անդամները): Մարզային հիվանդանոցներ են տարվել 11 վիրավոր ուղեւորներ:

Տյումենի տրանսպորտային դատախազի տեղակալ **Վալենտին Տարասովի** խոսքերով, վերսլացքից հետո անձնակազմը չէր կապվել դիսպետչերների հետ: Օդանավն անհետացել էր ռադարի էկրանից, բայց վերգետնյա ծառայության աշխատակիցները պատուհանից տեսել էին, թե ինչպես է ընկնում 3-5 կմ բարձրացած օդանավը: Գետնին ընկնելով՝ օդանավը բաժանվել էր 3 մասի եւ ապա բոցավառվել էր:

Անկման վայրում փրկարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են օդանավի «սեւ արկղը» եւ թռիչքի պարամետրերի գրանցման սարքը:

Օդանավի աղետի փաստի կապակցությամբ քրեական գործ է հարուցվել ըստ 263-րդ հոդվածի 3-րդ մասի (երկաթուղային, օդային կամ ջրային տրանսպորտի երթեւեկության եւ շահագործման կանոնների խախտում):

ՄԵԾ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ

# Վերջին հրաժեշտը՝ Ալեքսանդր Հարությունյանին



**Անցած շաբաթ օրը մայրաքաղաքի հասարակայնությունը վերջին հրաժեշտը տվեց Երեւանում կյանքի 92-րդ տարում վախճանված ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանին:**

**(Մեկ օր առաջ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիսապետությամբ կոմպոզիտորի հոգեհանգստյան արարողություն է տեղի ունեցել Երեւանի ս. Հովհաննես եկեղեցում, որի ավարտին Վեհափառ Հայրապետը մասնավորապես նշել է Ալ. Հարությունյանի մատուցած ծառայությունները Հայաստանյայց Եկեղեցուն, որի համար էլ պարգեւատրվել էր Եկեղեցու բարձրագույն շքանշանով):**

**Հանգուցյալի դագաղը դրված էր Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի երկրորդ հարկի ճեմասրահում: Շենքի մուտքի աջ եւ ձախ կողմերում սգո պսակներ են դրված ՀՀ նախագահի, վարչապետի, Երեւանի քաղաքապետի, Ալ. Հարությունյանի թաղման կառավարական հանձնաժողովի, ՀՀ մշակույթի նախարարության, Հայաստանի կոմպոզիտորների միության, այլ անձանց եւ կազմակերպությունների կողմից:**

**Այստեղ են Ալ. Հարությունյանի թաղման կառավարական հանձնաժողովի նախագահ, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, պաշտոնական այլ անձինք, գրականության եւ արվեստի գործիչներ, երաժշտասերներ:**

**«Մենք կորցրինք մեր մեծերից մեծին, վերջին մոհիկաններից մեկին: Շատ դժվար է գնահատել այն գործունեությունը, որ ծավալեց Ալեքսանդր Հարությունյանը, կոմպոզիտոր, որ դարձավ հայ ժամանակակից երաժշտության նշանաբաններից, կոմպոզիտոր, որի երաժշտությունը հնչում է ամբողջ աշխարհում: Նա խորը հետք թողեց մեր երաժշտության մեջ», մեր թղթակցին ասաց կոմպոզիտոր Մելիք Մավիսակալյանը:**

**«Մեր մշակույթի մի հզոր կտոր պոկվեց կյանքից, բնականաբար թողնելով նույնքան հզոր հետք ոչ միայն որպես արվեստագետ, այլեւ որպես մարդ, որ իր ուսերի վրա կրեց 92 տարի, փառքի արժանացավ, մի մարդ, որն արձանագրվեց իր ժողովրդի բոլոր ցավերին եւ ուրախություններին: Նրա մի քանի գործեր համաշխարհային երաժշտության ոսկե ֆոնդ են մտել», ասաց ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը:**

**Կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի գնահատմամբ, որը ննջեցյալի երկարամյա ընկերն է եղել, «հայկական երաժշտությունը կորցրեց իր մեծագույն գործիչներից մեկին, որը դեմք էր միջազգային, համաշխարհային երաժշտական մասշտաբով»:**

**«Ալեքսանդր Հարությունյանի մահը շատ խորը կորուստ էր մեզ համար: Նա ուներ իր ձեռագիրը, որը երբեք չէիր շփոթի ուրիշի հետ: Նա շատ մեծ գործ է կատարել մեր ազգի երաժշտության համար: Նրա փոխարինողին ես չեմ տեսնում», նկատեց դիրիժոր Հովհաննես Չեքիջյանը:**

**...Ցերեկվա ժամը 14-ն է: Ալ. Հարությունյանի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու համար այստեղ է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Նա իր ցավակցությունն է հայտնում կոմպոզիտորի տիկնոջը եւ դստերը, մյուս հարազատներին ու մերձավորներին:**

**Դիմելով ներկաներին, Հայաստանի երգչախմբային ընկերության նախագահ Դավիթ Ղազարյանը տեղեկացնում է, որ կոմպոզիտորի մահվան առթիվ ցավակցություն են հայտնել ՀՀ նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի ղեկավարությունը, Երեւանի քաղաքապետը, Ռուսաստանի եւ Մոսկվայի կոմպոզիտորների միությունները, Սանկտ Պետերբուրգի Մարիինյան թատրոնի գեղարվեստական ղեկավար Վալերի Գերգիեւը, արտասահմանյան տարբեր երաժշտական միավորումներ ու հրատարակչություններ, սփյուռքահայ մտավորականներ, կոմպոզիտոր Կոնստանտին Օրբելյանը (ԱՄՆ), այլք:**

**Իր խոսքում ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը ներկայացրեց Ալ. Հարությունյանի կյանքը եւ գործը, ասելով, որ մեր երաժշտական աշխարհը ծանր կորուստ կրեց: Կյանքից հեռացավ մեր ժամանակների մեծանուն կոմպոզիտորը, որը հսկայական ու բազմաժանր երաժշտություն է թողել՝ շուրջ 250 ստեղծագործություն, որոնք ղեկավարել ու կատարել են համաշխարհային մեծության դիրիժորներ եւ մենակատարներ, որ նրա ստեղծագործությունները լույս են ընծայել աշխարհի լավագույն հրատարակչությունները: «Այսօր հրաժեշտ ենք տալիս հայ երաժշտության նահապետներից մեկին՝ ժողովրդի կողմից շատ սիրված կոմպոզիտորին: Նրա անգնահատելի ժառանգությունը հավերժ կմնա հայ եւ համաշխարհային արվեստի գանձարանում», ասաց պրն վարչապետը:**

**Մայր Աթոռ ս. Էջմիածնի քահանայից դասը կատարեց հոգեհանգստյան պաշտոն, որից հետո հանգուցյալի դագաղը դուրս բերվեց թատրոնի շենքից, եւ հուղարկավորողների թափորն ուղղություն վերցրեց դեպի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոն, որտեղ եւ տեղի ունեցավ կոմպոզիտորի թաղման արարողությունը:**

Ն. Վ.

# «Տոկիո» լարային քառյակը կրկին Երեւանում է

«Երեւանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնը այսօր բացում է 13-րդ համերգաշրջանը, որի պատիվը տրվել է աշխարհի լավագույն կամերային տիտղոսակիր խմբի՝ «Տոկիո լարային քառյակ»-ին: Հայ երաժշտասերները այդ խմբի հրաշալի համերգը ըմբոշխնել են 2005-ին «21-ի հեռանկարներ» փառատոնի շրջանակներում: Կրկին նրանց լսելու հնարավորությունը գարնանային գեղեցիկ նվեր է Երեւանի քաղաքապետարանի, ՀՀ մշակույթի նախարարության եւ իհարկե ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից, որի բարձր հովանու ներքո է անցկացվում փառատոնը:

Երեկ քաղաքապետարանում երաժիշտները հանդիպեցին լրագրողների հետ: Նրանց ներկայացրեց փառատոնի հիմնադիր նախագահ եւ գեղղեկ կոմպոզիտոր Ստեփան Ռոստոմյանը: Քառյակն հիմնադրվել է 42 տարի առաջ Նյու Յորքի Ջուլիարդ երաժշտանոցում եւ իր ծագումով կապվում է Տոկիոյի Տոհո երաժշտական դպրոցի հետ: Շուրջ 15 տարի քառյակի առաջին ջութակն է եղել կանադացի երաժիշտ, ծագումով հայ Փիթեր Ունջյանը: Խումբը համագործակցել է բազմաթիվ ականավոր արվեստագետների եւ կոմպոզիտորների հետ, թողարկել բազմաթիվ ձայնագրություններ եւ սահմանել պատկառելի մրցանիշ դասավանդման ասպարեզում:

«**Ազգի**» հարցին պատասխանելով **Մարտին Բիվերն** ասաց, որ յուրաքանչյուր համերգաշրջանում տալով ավելի քան հարյուր համերգ՝ աշխարհի տարբեր երկրներում, քառյակը ողջ մոլորակում ձեռք է բերել երկրպագուներ, որոնցից շատերի հետ կապը մշտապես պահում է: Քառյակը բացառիկ պայմանագիր է կնքել «Դոյչե գրամաֆոն» ընկերության հետ, որի արդյունքում խումբը դարձավ աշխարհի առաջատար քառյակներից մեկը, եւ թողարկեց ավելի քան 40 ձայնասկավառակ: Այժմ համույթը ձայնագրություններ է կատարում Հարմոնիա Մունդի ընկերության հետ: 1976-ից սկսած քառյակի անդամները դասավանդում են Յեյլի կոնսերվատորիայում, վարպետության դասեր անցկացնում Հարավային Ամերիկայում, Եվրոպայում եւ Արեւելքում:

«Տոկիո լարային քառյակ»-ը 10 տարի ելույթ է ունենում հետեւյալ կազմով՝ Մարտին Բիվեր (առաջին ջութակ), Կիկվեյ Իկեդա (ջութակ), Կազուհիդե Իզոմուրա (ալտ), Կլիվ Գրինսմիթ (թավջութակ): Համույթը նվագում է «Պագանինի քառյակ» Ստրադիվարիուսի գործիքներով, որոնք 19-րդ դարում ձեռք է բերել եւ նվագել լեգենդար վիրտուոզ Նիկոլո Պագանինին: Խմբի գործիքները ստեղծվել են՝ ջութակները՝ 1680 եւ 1727 թվին, ալտը՝ 1731, թավջութակը՝ 1736, եւ դրանք խմբի համար վարձակալում է ճապոնական երաժշտական հիմնադրամը սկսած 1995 թվականից, երբ դրանք ձեռք են բերել Վաշինգտոնի Քորքորան արվեստի պատկերասրահից:

«**Ազգի**» հարցին, թե վտանգավո՞ր չէ այդպիսի արժեքավոր գործիքներով աշխարհով մեկ շրջել, **Կիկվեյ Իկեդան** ասաց. «Մենք գնում ենք այն երկրներ, որտեղ անվտանգությունը լիովին ապահոված է: Հայաստանը նույնպես ապահով երկրների թվում է եւ մենք սիրով կրկին եկել ենք այստեղ, քանի որ շատ հպարտ էինք ու երջանիկ նախորդ ընդունելությունից եւ հաճույքով համաձայնվեցինք կրկին գալ, երբ համերգների միջեւ ազատ ժամանակ գտանք»:

Ցավոք, քառյակը դեռ հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ չի կատարում, չնայած որ քաջատեղյակ են Արամ Խաչատրյանի գործերին ու գուցե առաջիկայում դրանցից որեւէ մեկն ընդգրկեն իրենց համերգային ծրագրում: «**Ազգի**» հաջորդ հարցը՝ շարունակո՞ւմ եք Փիթեր Ունջյանի հետ համագործակցությունը, Մարտին Բիվերն ասաց. «Տոկիո» քառյակի առաջին ջութակը շուրջ 14-15 տարի եղել է Փիթեր Ունջյանը, որը այժմ Տորոնտոյի (Կանադա) նվագախմբի գլխավոր դիրիժորն է (ձեռքը վնասելու պատճառով այլեւս չի նվագում): Ի դեպ, անվանի հայ երաժիշտ Իվան Գալամյանի աշակերտն են եղել Մարտին Բիվերն ու շատ այլ երաժիշտներ, որոնք այսօր հայտնի են երաժշտաշխարհում»: Քառյակը տարվա իր ծրագիրն ամեն անգամ կազմում է տարբեր կոմպոզիտորների ստեղծագործություններից, իսկ հիմնականում՝ Բեթհովեն, Շուման, Շուբերտ, Հայդն եւ նաեւ քառյակի համար հատուկ գրված ստեղծագործություններ:




Այսօր առավոտյան ժամը 10-ին քառյակը Կոմիտասի անվ. կոնսերվատորիայում վարպետության դասեր կտա, իսկ երեկոյան՝ Արամ Խաչատրյան համերգասրահում կհնչեցնի Հայդնի լարային քառյակ սոլ մաժոր օպ 77 թիվ 1, Բարտոկի լարային քառյակ ռե մաժոր, Դեբյուսիի լարային քառյակ սոլ մինոր օպ 10 ստեղծագործությունները: Նրանք, ովքեր ներկա կգտնվեն անդրանիկ համերգին, կվայելեն չորս հրաշք գործիքների հնչեղությունը՝ աշխարհում ամենահայտնի երաժիշտների կատարմամբ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Թատրոն X» 5-րդ հանրապետական փառատոնի մեկնարկն այսօր

Այսօր մեկնարկում է «Թատրոն X» 5-րդ հանրապետական փառատոնը, որը անցկացվում է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: Ապրիլի 2-ից մայիսի 3-ը մայրաքաղաքի, մարզերի եւ ԼՂՀ-ի 30 թատերախմբերի ու թատրոնների մասնակցությամբ տեղի կունենա փառատոնը, որի ընթացքում սպասվում են անակնկալներ, հաղորդեց Փառատոնի նախագահ **Արա Խզմալյանը** եւ հավելեց, որ «Թատրոն X»-ը այն եզակի փառատոներից է, որը տարիների ընթացքում չկորցրեց իր դեմքն ու առաքելությունը: Նա կարեւորեց նաեւ Երեւանի եւ մարզերի թատերական աշխարհի միջեւ սերտ կապերի ստեղծումը, ինչն էլ փորձում են անել. «չէ՞ որ վակումի մեջ ստեղծագործողը չի տա այն արդյունքը, ինչ ազատության մեջ ստեղծագործողը»:

Ինչպես ամեն տարի, այս տարի եւս փառատոնի շրջանակում տեղի կունենան բաց հրապարակային մասնագիտական քննարկումներ, իսկ սրանից զատ մարզերում կանցկացվեն վարպետության դասեր:

Փառատոնի գեղարվեստական ղեկավար **Ռուբեն Բաբայանն** էլ ընդգծեց. «Փառատոնի միջոցով փորձում եմ հասկանալ, թե թատրոնը, մշակույթն ինչ ազդեցություն են ունենում հասարակության վրա: Տարեցտարի քննարկումները դառնում են բաց՝ ավելի լայն շրջանակ ընդգրկում: Ամենակարեւորն այն է, որ թատերական ոլորտի երիտասարդների որակական ցուցանիշը փառատոնից փառատոն ավելանում է»:

«Թատրոն X» 5-րդ հանրապետական փառատոնի բացումը տեղի կունենա այսօր՝ 17:00-ին Հովհ. Թումանյանի անվ. Պետական տիկնիկային թատրոնում, որից հետո ներկայացումով հանդես կգա Թատերական գործիչների միության «UP» թատերախումբը «Քիթը» ներկայացմամբ, որի բեմադրող ռեժիսորն է Սամսոն Մովսեսյանը: Իսկ փակումը՝ մայիսի 3-ին «Բոհեմ» թատերական ընկերության «Շեղշե լյա ֆամ» ներկայացմամբ, բեմադրող ռեժիսոր Նարեկ Դուրյան:

Հատկանշական է, որ ի տարբերություն նախորդ տարիների 8 թատերախմբերի, շուրջ 30 թատերախումբ է մասնակցում՝ Երեւանից, մարզերից եւ ԼՂՀ-ից:

Փառատոնի գլխավոր հովանավորն է «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Արթուր Աբրահամը պաշտպանեց Եվրոպայի չեմպիոնի իր տիտղոսը



2-րդ միջինքաշային կարգում WBO-ի վարկածով Եվրոպայի չեմպիոն Արթուր Աբրահամը հաջողությամբ պաշտպանեց իր տիտղոսը: Գերմանիայի Կիլ քաղաքում անցկացված մենամարտում Արթուրը միավորներով (119-108, 118-109, 118-109) հաղթեց լեհ բռնցքամարտիկ Պյոտր Վիլչեւսկուն:

Ինչպես խոստացել էր Արթուրը, նա մենամարտն անցկացրեց բավականին ակտիվ, հարձակողական մարտաոճով: Պետք է արժանին մատուցել նաեւ Վիլչեւսկուն, որն «ամուր ընկույզ» դուրս եկավ ու կարողացավ դիմանալ Աբրահամի հուժկու հարվածներին: Արթուր Աբրահամը պրոֆեսիոնալ ռինգում իր 34-րդ հաղթանակը տոնեց:

«Մենամարտից առաջ էլ նշել էի, որ Վիլչեւսկին ուժեղ բռնցքամարտիկ է ու դժվար է լինելու: Մենամարտին հետեւողները դրանում կարծում եմ, համոզվեցին: Ճիշտ է, ինձ հաջողվեց մի քանի հուժկու եւ դիպուկ հարվածներ կատարել, սակայն Վիլչեւսկին ֆիզիկապես լավ մարզավիճակում էր, ուստի դիմացավ դրանց: Այս մենամարտը բոլոր առումներով օգտակար էր ինձ համար: 12 ռաունդները հնարավորություն տվեցին ինձ հասկանալ, թե ինչպես պետք է անցկացնել մենամարտը՝ հավասարաչափ տեղաբաշխելով ուժերս: Բացի այդ, իմ մարտավարության մեջ որոշակի փոփոխություններ կային ու դրանք եւս կիրառեցի այս մենամարտում: Վիլչեւսկին շատ ուժեղ մրցակից էր, ուստի ուրախ եմ, որ հաղթեցի:

Հավանաբար հաջորդ մենամարտն անցկացնեմ օգոստոսին ու արդեն ռինգ դուրս գամ աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար: WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնը ներկայումս Ռոբերտ Շտիգլիցն է: Նա առաջիկայում մենամարտելու է եւ եթե հաղթի, ապա օգոստոսին հենց նրա հետ մրցավեճի կբռնվեմ», մենամարտից հետո հենց ռինգում նշել է **Արթուր Աբրահամը**:

Նշենք, որ մենամարտից անմիջապես հետո Աբրահամն ուղեւորվել է հիվանդանոց՝ ստուգելու ականջը: Մինչեւ մենամարտն Արթուրը ականջի ցավեր ուներ ու մտահոգված էր, որ հանկարծ թմբկաթաղանթը պատռված չլինի:

Մենամարտի մասին հետեւյալ կարծիքն է հայտնել Արթուրի պրոմոութեր **Վիլֆրեդ Զաուերլանդը**. «Արթուրը կրկին ճիշտ ուղու վրա է: Հանդերձարան մտնելով, զգացի, որ նա գտել է իրեն: Վիլչեւսկին շատ ուժեղ բռնցքամարտիկ է, նա ամուր ծնոտ ունի եւ լավ էր տեղաշարժվում ռինգում, ուստի դժվար էր նրան դիպուկ հարվածել: Զգացվում է, որ Արթուրն արդեն 80 տոկոսով պատրաստ է աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար մենամարտելու: Մնացած 20 տոկոսն առաջիկա ամիսներին կլրացնենք: WBO-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Ռոբերտ Շտիգլիցի եւ Ջորջ Գրոուվսի մրցավեճի հաղթողը պարտավոր է մրցել Աբրահամի հետ»:

«Դա շատ բարդ մենամարտ էր: Արթուրն իրեն դրսեւորեց որպես գերազանց բռնցքամարտիկ, որը տիրապետում է հուժկու հարվածների, տեխնիկապես լավ է պատրաստված: Ուստի փորձում էի խուսափել հարվածներից: Սակայն նրա որոշ հարվածներ դիպան ինձ ու մինչեւ հիմա դրանցից մեջքս ցավում է: Կարծում եմ, որ մրցավարի կողմից ինձ արված զգուշացումը սխալ էր», հայտարարել է **Պյոտր Վիլչեւսկին**:

Գերմանական ARD հեռուստաալիքի տվյալներով երկրում Աբրահամի եւ Վիլչեւսկու մենամարտը դիտել են 4,66 մլն բնակիչներ, ինչը կազմում է այդ պահին հեռուստացույց դիտողների 19,9 տոկոսը:

# Վլադիմիր Հակոբյանը բավարարվեց աշխարհի գավաթի ուղեգրով




**Պլովդիվում վերջնագիծը հատեց շախմատի Եվրոպայի տղամարդկանց անհատական առաջնությունը: Ցավոք մրցանակային տեղերին հավակնող Վլադիմիր Հակոբյանին չհաջողվեց մեդալ նվաճել: Հայ գրոսմայստերի համար ճակատագրական եղավ 10-րդ տուրում ֆրանսիացի Լաուրենտ Ֆրեսինետից կրած պարտությունը, որը միակն էր մրցաշարում: Ավարտական տուրում Հակոբյանը հաղթեց ռուսաստանցի Ալեքսանդր Խալիֆմանին եւ վաստակեց 8 միավոր: Լրացուցիչ գործակիցները հաշվի առնելով, Հակոբյանը զբաղեցրեց միայն 12-րդ տեղը՝ զրկվելով մեդալից: Արծաթե մեդալը նվաճեց Լաուրենտ Ֆրեսինետը, բրոնզը բաժին հասավ Վլադիմիր Մալախովին, որոնք եւս վաստակել էին 8-ական միավոր: Իսկ չեմպիոնի տիտղոսը նվաճեց ռուսաստանցի Դմիտրի Յակովենկոն, որը վաստակեց 8,5 միավոր: Նա ավարտական 2 տուրերում հաղթանակներ տոնեց Միխայիլ Կոբալիայի եւ Լաուրենտ Ֆրեսինետի նկատմամբ:**

**Վլադիմիր Հակոբյանն աշխարհի գավաթի խաղարկության ուղեգիր նվաճեց: Հայ շախմատիստներից 2-րդ արդյունքն ունի Գաբրիել Սարգսյանը: Նա Հայաստանի պատվիրակներից միակն էր, որ մնաց անպարտելի: Գաբրիելը 7,5 միավորով գրավեց 31-րդ տեղը: Ավարտական 2 պարտիաներում նա ոչ-ոքի խաղաց Իլդար Խայրուլինի հետ ու հաղթեց Իվան Սալգադոյին: Գաբրիելին չհաջողվեց աշխարհի գավաթի խաղարկության ուղեգիր նվաճել:**

**7-ական միավոր վաստակեցին Տիգրան Պետրոսյանը, Հրանտ Մելքումյանն ու Զավեն Անդրեասյանը: Մեր մյուս մասնակիցների ցուցանիշներն այսպիսին են. Արման Փաշիկյան, Ռոբերտ Հովհաննիսյան՝ 6,5-ական միավոր, Սերգեյ Մովսիսյան, Սամվել Տեր-Սահակյան՝ 6-ական, Հովհաննես Գաբուզյան՝ 5,5, Վլադիմիր Պողոսյան՝ 3,5:**

## Եզրափակեցին աղյուսակը

**Հանդբոլի Հայաստանի մինչեւ 18 տարեկանների հավաքականն անհաջող հանդես եկավ Եվրոպայի պատանեկան առաջնության ընտրական մրցաշարում: Ընտրական 10-րդ խմբում ընդգրկված հայ հանդբոլիստները Սերբիայի Պոժեգա քաղաքում կայացած մրցաշարում պարտվեցին Բելգիայի (11-47) եւ Սերբիայի (14-38) հավաքականներին ու խմբում գրավելով վերջին տեղը, դուրս մնացին հետագա պայքարից: Հաջորդ փուլ մտավ Եվրոպայի պատանիների չեմպիոն Սերբիայի ընտրանին, որը 36-22 հաշվով հաղթեց բելգիացիներին:**

## Տեղերը բաշխվեցին

**Դորտմունդում ավարտվեց սեղանի թենիսի աշխարհի թիմային առաջնությունը: Հայաստանի տղամարդկանց հավաքականը նախ 81-84-րդ տեղերի համար պայքարում 3-0 հաշվով հաղթեց մակեդոնացիներին, ապա 1-3 հաշվով զիջեց Պերուի ընտրանուն եւ գրավեց 82-րդ տեղը:**

**3-րդ խմբում հանդես եկող հայ թենիսիստուհիները գրավեցին 63-րդ տեղը: Հայաստանի հավաքականը նախ 2-3 հաշվով զիջեց Գվատեմալայի ընտրանուն, ապա 3-0 հաշվով պարտության մատնեց լատվիացիներին:**

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ

# Արթուր Դավթյանն էլ մրցանակակիր դարձավ

**Քաթարի մայրաքաղաք Դոհայում անցկացված սպորտային մարմնամարզության աշխարհի գավաթի խաղարկությունում Հայաստանին 2-րդ մեդալը պարգեւեց Արթուր Դավթյանը: 19-ամյա մարմնամարզիկն իրեն լավ դրսեւորեց հենացատկում՝ 15,725 միավորով արժանանալով արծաթե մեդալի: Աշխարհի գավաթակիր դարձավ չինացի Վեյ Դուն, որը վաստակեց 16,012 միավոր:**

**Հիշեցնենք, որ Հայաստանին առաջին մեդալը պարգեւել էր Վահագն Դավթյանը, որն արծաթե մրցանակակիր էր դարձել օղակների վրա վարժությունում:**

# Հարգանքի տուրք Ալեքսանդր Կովալենկոյի հիշատակին

**10 տարի առաջ՝ 2002-ի ապրիլի 1-ին հանկարծամահ եղավ հայկական ֆուտբոլի լավագույն ներկայացուցիչներից մեկը՝ ԽՍՀՄ չեմպիոն ու գավաթակիր Ալեքսանդր Կովալենկոն, որին ֆուտբոլասերները սիրով Շուրիկ էին անվանում: Ալեքսանդր Կովալենկոն Երեւանի «Արարատի» պաշտպանության հենասյունն էր, իսկ կյանքում կենսախինդ ու կատակասեր անձնավորություն էր, սիրված ընկերական շրջապատի կողմից:**

**Անվանի ֆուտբոլիստի մահվան 10-ամյա տարելիցի առիթով նրա շիրիմին էին այցելել հարազատները, նախկին թիմակիցներն ու ընկերները՝ հարգանքի տուրք մատուցելով Ալեքսանդր Կովալենկոյի հիշատակին: Նրանց թվում էին «Արարատ-73»-ի խաղացողներ Էդուարդ Մարգարովը, Արկադի Անդրեասյանը, Հովհաննես Զանազանյանը, Նորայր Մեսրոպյանը, Սերգեյ Պողոսյանը, Նիկոլայ Ղազարյանն ու Սուրեն Մարտիրոսյանը, «Բանանց» ակումբի նախագահ Սարգիս Իսրայելյանը, մարզական մեկնաբան Ռուդիկ Բարսեղյանը, «Արարատ-73» ընկերության հիմնադիր Կառլեն Թորոսյանը, Երեւանի պետական մարզական քոլեջի խորհրդի նախագահ Դերենիկ Գաբրիելյանը:**

# Առաջնությունը վերջապես մեկնարկեց


ՖՈՏՈԼՈՒՐ

Հանգստյան օրերին տրվեց ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության մեկնարկը: Առաջինը մրցասպարեզ դուրս եկան «Բանանցի» եւ «Փյունիկի» ֆուտբոլիստները, իսկ մեկ ժամ անց «Միկա» մարզադաշտում իրենց մրցավեճը սկսեցին «Իմպուլսն» ու «Միկան»:

Առաջնության առաջին գոլը գրանցվեց «Բանանցի» եւ «Փյունիկի» մրցավեճում: Այն գրանցվեց «Բանանցի» ֆուտբոլիստ Արտակ Դաշյանի օգտին, որը 35-րդ րոպեին տուգանային հեռահար հարվածով բացեց հաշիվը: Փյունիկցիները մեծ ջանքեր գործադրեցին պարտությունից խուսափելու համար եւ ի վերջո Հովհաննես Հովհաննիսյանը վերականգնեց հավասարակշռությունը:

«Իմպուլս»-«Միկա» հանդիպումը դրամատիկ ավարտ ունեցավ: Արդեն 11-րդ րոպեին իմպուլսցի Նորայր Գյոզալյանը բացեց հաշիվը: Առաջին խաղակեսի ավարտին բրազիլացի Ալեքսն անկյունայինի խաղարկումից հետո գլխի հարվածով հավասարեցրեց հաշիվը: Իսկ ավելացված ժամանակում «Միկան» կորզեց հաղթանակը: Թիմին կրկին հաջողություն բերեց անկյունայինի խաղարկումը, որի ժամանակ Գեւորգ Պողոսյանը մոտ տարածությունից գրավեց դարպասը: Հաղթանակը թանկ նստեց «Միկայի» վրա, քանի որ խաղային դրվագներից մեկի ժամանակ Ալեքսը կոտրեց ձեռքը ու ստիպված կլինի որոշ ժամանակով խաղադաշտ դուրս չգալ:

Կամային հաղթանակ տոնեց նաեւ «Շիրակը», որը Ոսկեհատում 2-1 հաշվով պարտության մատնեց «Արարատին»: Վերջինիս կազմում խաղասկզբում հաշիվը բացեց Արա Հակոբյանը: Դրանից հետո շիրակցիներ Գեւորգ Հովհաննիսյանն ու Ֆոֆանա Բեկոն 2 անգամ հասան հաջողության:

Երկրի չեմպիոն «Ուլիսին» չհաջողվեց առաջնությունը սկսել հաղթանակով: Իջեւանում «Գանձասարի» հետ մրցավեճում դարպասները մնացին անառիկ:

# 7-րդ անընդմեջ պարտությունը

Ֆուտբոլի Հայաստանի կանանց ազգային հավաքականը 2013-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում 7-րդ անընդմեջ պարտությունը կրեց: Մեր ընտրանին «Միկա» մարզադաշտում 2-4 հաշվով զիջեց Ավստրիայի ֆուտբոլիստուհիներին: Խաղասկիզբը հաջող էր հայ ֆուտբոլիստուհիների համար, որոնք 2 անգամ գրավեցին մրցակցի դարպասը: Աչքի ընկան Գոհար Արմենյանն ու Անի Ղուկասյանը: Ի դեպ, մինչ այդ մեր հավաքականին չէր հաջողվել բացել գոլերի հաշիվն ընտրական մրցաշարում:

Ցավոք, խփած գոլերը հաջողություն չբերեցին ՀՀ հավաքականին: Հետագայում ավստրիացիները 4 գոլ խփեցին ու շահեցին հանդիպումը: Մեր ընտրանին եզրափակում է աղյուսակն առանց միավորի: Ավստրիացիները 10 միավորով 3-րդ տեղում են: Առաջատարը Դանիայի ընտրանին է, որը 4 խաղերում էլ հաղթել է: ՀՀ հավաքականն իր հաջորդ հանդիպումը կանցկացնի սեպտեմբերի 19-ին՝ հյուրընկալելով Չեխիայի ընտրանուն, որը 10 միավորով 2-րդ տեղում է:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ՎԻԶԱՆԵՐ

# ԱՄՆ մուտքի արտոնագրերի միջնորդավճարի չափը փոխվել է

**Ինչպես «Ազգին» տեղեկացրեց ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան մամուլի բաժինը, ԱՄՆ պետքարտուղարությունն ապրիլի 13-ից կփոփոխի արտոնագրերի միջնորդավճարի չափը: Ոչ ներգաղթային արտոնագրերի եւ սահմանահատման քարտեզի համար նախատեսված միջնորդավճարները կբարձրանան, մինչեռ բոլոր տեսակի ներգաղթային արտոնագրերի համար նախատեսվածները կնվազեն:**

**Միջնորդավճարների չափը ավելացնելը պետքարտուղարությունը պատճառաբանում է, որ ներկա պահին գանձվող միջնորդավճարները բազմաթիվ պատճառներով չեն ծածկում արտոնագրերի ձեւակերպման համար ծախսված միջոցները:**

**Ոչ ներգաղթային արտոնագրերի համար գանձվող միջնորդավճարներն են՝ զբոսաշրջություն, բիզնես, տրանզիտ, անձնակազմի անդամ, ուսանողական, փոխանակման ծրագրի այցելուի եւ լրագրողների համար նախատեսված արտոնագրեր՝ 160 դոլար (նախկին 140-ի փոխարեն), միջնորդագրի վրա հիմնված արտոնագրեր (G, L, O, P, Q, R)՝ 190 դոլար (նախկին 150-ի փոխարեն), պայմանագրային հիմունքներով ներդնողների եւ առեւտրով զբաղվողների համար նախատեսված արտոնագրեր (E)՝ 270 դոլար (նախկին 390-ի փոխարեն), հարսնացուների, փեսացուների համար (K)՝ 240 դոլար (նախկին 350-ի փոխարեն), սահմանահատման քարտեր (15 տարեկան եւ բարձր)՝ 160 դոլար (նախկին 140-ի փոխարեն), իսկ 15 տարեկանից ցածր՝ 15 դոլար 14-ի փոխարեն:**

**Ոչ ներգաղթային արտոնագրերի միջնորդավճարների փոփոխության հետեւանքով բոլոր տեսակի ներգաղթային արտոնագրերի միջնորդավճարների չափը նվազեցվում է. ընտանիքի անմիջական եւ ոչ անմիջական անդամների համար դիմումների նոր չափը 230 դոլար է, նախկին 330-ի փոխարեն, աշխատանքային միջնորդագրերի հիման վրա դիմումների նոր չափը 405 դոլար է, նախկին 720-ի փոխարեն, այլ ներգաղթային արտոնագրերի դիմումների նոր չափը 220 դոլար է, նախկին 305-ի փոխարեն, բազմազանության վիճակախաղի արտոնագրերի դիմումների նոր չափը 330 դոլար է, նախկին 440-ի փոխարեն, վերադարձող մշտական բնակչի կարգավիճակի միջնորդավճարի նոր չափը սահմանվել է 275 դոլար, նախկին 380-ի փոխարեն:**

**Այս բոլոր սակագները ուժի մեջ կմտնեն 15 օրից: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ travel.state.gov եւ ԱՄՆ դեսպանատան կայքէջերից:**

Մ. ՄԱԿԱՐՅԱՆ

# Զգույշ, կրակիդ վրա չայրվես

Ադրբեջանական 1news.az կայքէջը, որը, ինչպես բազմիցս ենք նշել, միայն պաշտոնապես է, որ պետական չէ, անցկացնում է այսպիսի հարցում. ինչպիսի՞ն եք ցանկանում տեսնել Բաքուն 20 տարի անց: Տարբերակները հետեւյալն են՝ «Տարածաշրջանի ֆինանսական կենտրոն», «Տարածաշրջանի առողջապահական կենտրոն», «Կասպից ծովի ավազանի տուրիստական կենտրոն» եւ այլն: Հարցվածների (100-ից ավելի՝ երեկ կեսօրի տվյալներով) քվեարկության համաձայն՝ 33 տոկոսը ցանկանում է, որ Բաքուն լինի տարածաշրջանային ֆինանսական կենտրոն, եւ միայն 7 տոկոսն է, որ քսան տարի հետո Բաքուն ցանկանում է տեսնել, օրինակ, որպես առողջապահական կենտրոն:

Սա բոլորովին այլ մտորումների տեղիք է տալիս, առաջին հերթին հարցման կազմակերպիչներին ու ադրբեջանցի հասարակությանն առհասարակ, մենք, սակայն, նկատենք, որ վերջին շրջանում հարեւան երկիրը, որին այլ կերպ անվանում են «կրակների երկիր», գերմաքսիմալիստական, երբեմն անգամ ուտոպիական, մեղմ ասած, խիստ հավակնոտ նշաձողեր է բռնում ու փորձում իրագործել: Այս ամենը բնորոշ է նորահայտ երկրին, եթե ոչ նորահայտ ազգությանը: Ինչպես փոքրիկ երեխան ինչ-որ միջավայրում փորձում է ամեն ինչի ձեռք տալ, այնպես էլ նորահայտ պետություններն ու ազգությունները, ի դեպս, ադրբեջանցիներն ու Ադրբեջանի, փորձում են ամեն ինչ տեսնել, զգալ, ու որը խիստ վտանգավոր է նաեւ Ադրբեջանի հարեւանների ու բարեկամների համար, նաեւ վերցնել:

Օրինակ, այս տարվա հունվարի մեկից հարեւան երկիրը դարձավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ՝ երկու տարի պաշտոնավարման ժամկետով: Զուգահեռաբար Ադրբեջանը հաղթեց «Եվրոտեսիլի» եվրոպական երգի մրցույթում ու իրավունք ստացավ մրցույթը բերել «քամիների քաղաք» Բաքու, սա դեռ բավական չէ, Ադրբեջանը ցանկանում է հայտ ներկայացնել ՈւԵՖԱ՝ անցկացնելու Եվրոպայի ֆուտբոլի գավաթի առաջնություններից մեկը Վրաստանի հետ համատեղ: Ու չնայած վրացիները դեռեւս ոչ հաստատում, ոչ հերքում են այս հավակնոտ նախաձեռնությունը, սակայն ակնհայտ է, որ սա Բաքվի հերթական նուրբ ծրագիրն է՝ մեկուսացնելու Հայաստանին: Սպորտի բնագավառում Ադրբեջանը մեկ այլ նախաձեռնություն էլ ունի. Բաքուն ցանկանում է դառնալ Օլիմպիադա-2020-ի մայրաքաղաքը:

Հիմա ի՞նչ նպատակով է այս ամենն արվում: Եթե անգամ տնտեսապես խոշոր երկրներ, ինչպիսիք են Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Ֆրանսիան, այս օրերին խուսափում են նման մասշտաբի միջոցառումներ անցկացնելուց, ինչո՞ւ է «կրակների երկիրը» սեփական կամքով իրեն կրակը գցում: Այս ամառ Լոնդոնում կայանալիք օլիմպիական խաղերը Բրիտանիայի վրա, ըստ նախնական հաշվարկների, նստելու են 24 մլրդ ֆունտ ստեռլինգ, 38 մլրդ դոլար: Եթե Բաքուն ցանկանում է Լոնդոնից ավելի լավ օլիմպիդա անցկացնել, իսկ Բաքուն՝ իր հավակնություններով, սա անպայմանորեն ցանկանալու է, ապա պետք է ծախսի 38 մլրդ դոլարից շատ ու շատ ավելի, մանավանդ որ, ի տարբերություն Բրիտանիայի, Ադրբեջանում գոյություն չունեն ժամանակակից մարզական համալիրներ, հետեւաբար 8 տարի անց Ադրբեջանը պետք է լուրջ սպորտային շինարարությամբ ներկայանա: Իսկ ո՞վ պետք է Ադրբեջանի բյուջե մուտքագրի այդքան գումար: Սա այն դեպքում, երբ հարեւան երկիրը չունի հզոր գաղթօջախներ, ազգային նվիրյալներ, որպեսզի նվիրատվությունների միջոցով գոնե հնարավոր լինի ակնկալել այդ եկամուտները: Հետեւաբար ադրբեջանցի ժողովուրդն ինքը իր մաշկի վրա պետք է զգա այս խոշոր միջոցառումների հնարավոր կազմակերպման ողջ ծանրությունը: Օրինակ, «Եվրոտեսիլի» համար համալիր կառուցելու պատրվակով Բաքվի որոշ շրջաններից բնակելի տներ են ապամոնտաժում: Ճիշտ է, երկրի առաջին տիկին **Մեհրիբան Ալիեւան** արդեն հայտարարել է, որ «տների ապամոնտաժումը կապ չունի «Եվրոտեսիլի» հետ», բայց եւ հավելել է. «Երկրում կան ուժեր, որոնք ցանկանում են խոչընդոտել «Եվրոտեսիլի» անցկացումը Բաքվում, ինչը մենք ոչ մեկին թույլ չենք տա»: Հետաքրքրական է, Մեհրիբան խանումը «թույլ չի տալիս» եւ սպառնում է սեփական ժողովրդի՞ն, որը պարզապես չի ցանկանում զրկվել սեփական տներից...

Ինչեւէ, կրկին դառնալով Օլիմպիադա-2020-ի Բաքվում անցկացնելու հավանականությանը, նշենք, որ մինչեւ հիմա օլիմպիական խաղեր կազմակերպել են երկու փոքրիկ երկիր՝ Ֆինլանդիան (ձմեռային) եւ Հունաստանը (ամառային): Հատկանշական է, որ Հունաստանը ֆինանսատնտեսական լուրջ խնդիրներ սկսեց զգալ հենց 2004-ի ամառային խաղերն անցկացնելուց հետո, քանի որ, ինչպես եւ ներկայիս Ադրբեջանում, այնպես էլ 2004-ի Հունաստանում չկային սպորտային համալիրներ, անհրաժեշտ ենթակառուցվածքներ, ու Աթենքը այս ամենի համար լրջագույն ֆինանսական ներդրումներ կատարեց: Սակայն, ինչ խոսք, Բաքուն՝ իր նավթային հնարավորություններով ամենեւին էլ Հունաստան չէ: Ու հավանաբար հարեւան երկրի իշխանությունները հենց նավթային պաշարներից ու եկամուտներից ելնելով են նման նշաձողեր բռնում: Այդուհանդերձ, ինչպես տեղեկացնում են ադրբեջանական գերատեսչական որոշ կայքեր, Ադրբեջանի Պետական նավթային հիմնադրամում այսօր հավաքագրված է միայն 30 մլրդ դոլար: Մինչդեռ, ինչպես վերը նշեցինք, Լոնդոնին այս տարվա օլիմպիադան «կաղքատացնի» 38 մլրդ դոլարով: Անշուշտ, նավթային հիմնադրամի պահուստները կարող են ավելանալ, սակայն այդ միջոցները հարեւան երկրում նախատեսված են որպես պահուստային ֆոնդ՝ երկրի տնտեսությունը փրկելու համար, երբ համաշխարհային շուկայում նավթի գինը հանկարծ ընկնի: Բացի սրանից, եթե անգամ նավթը պահպանի շուկայում այսօրվա գինը, Նավթային հիմնադրամը չի կարող իր ամբողջ պահուստային ֆոնդը հատկացնել օլիմպիադա անցկացնելու համար:

Ուրեմն իշխանությունների հույսը հասարակ ադրբեջանցի հարկատուներն են, որոնք մի օր բազմազգ Ադրբեջանում կարող են այլեւս հրաժարվել «վառվել» «կրակների երկրում»:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Ժամկետանց ձվեր

«Աշոցք» ՍՊԸ-ի կողմից 2011թ-ի դեկտեմբերի 28-ին ներմուծվել է ձվի խմբաքանակ, որը իրացվել է սույն թվականի հունվար եւ փետրվար ամիսներին: Ընկերությունը վերջին 25 արկղ խմբաքանակը շուկա է բաց թողել փետրվար ամսին: Գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից պարզվել է, որ ոչ ամբողջ խմբաքանակն է սպառվել եւ իրացման ցանցում հայտնվել են արդեն ժամկետանց ձվեր:

Ընկերությունը կոչ է անում բոլորին վերադարձնել չվաճառված խմբաքանակը:




## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը (քմ) | Շինության մակերեսը (քմ) | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Չարենցի փողոց թիվ 76/5 | կաթսայատուն | 2251.36 | 1244 | 498,750,000 |
| 2 | Բոլյան փողոց թիվ 4/3 | կաթսայատուն | 312.48 | 276.08 | 16,200,000 |
| 3 | Վիլնյուսի փող. Թիվ 91/2 | կաթսայատուն | 243.18 | 218.3 | 14,850,000 |
| 4 | Ռուբինյանց փողոց թիվ 24/1 | կաթսայատուն | 158.72 | 158.72 | 14,000,000 |
| 5 | Ռուբինյանց փողոց թիվ6/5 | կաթսայատուն | 353.75 | 344.65 | 15,230,000 |
| 6 | Պ.Ս ակի փող. Թիվ 1/6 | կաթսայատուն | 137.08 | 137.08 | 6,400,000 |
| 7 | Կաթսայատուն Նոր Արեշ 1/25 | կաթսայատուն | 195.5 | 195.5 | 9,867,000 |
| 8 | Արցախի փողոց 8/13 | կաթսայատուն | 439.06 | 439.06 | 32,895,000 |
| 9 | Գ. Մահարու 39/9 | կաթսայատուն | 328 | 328 | 10,093,000 |
| 10 | Աբոյան փողոց անցուղի 18/3 | կաթսայատուն | 441.95 | 441.95 | 22,550,000 |
| 11 | Էրեբունի 1 | կաթսայատուն | 240.72 | 240.72 | 14,325,000 |
| 12 | Էրեբունի փողոց 29/1 | կաթսայատուն | 262.3 | 262.3 | 8,956,000 |
| 13 | Տիտոգրադյան փող. 1/9 | կաթսայատուն | 161 | 161 | 11,466,000 |
| 14 | Տիտոգրադյան փող. 14/6 | կաթսայատուն | 175.75 | 175.8 | 12,668,000 |
| 15 | Խաղաղ Դոնի 31/12 | կաթսայատուն | 308.75 | 308.75 | 19,591,000 |
| 16 | Բաշինջաղյան փողոց h.187/6, h.1 ԿՇՀ | կաթսայատուն | 297.49 | 297.4 | 17,100,000 |
| 17 | ԿՇՀ h.35 Արարատյան 1 | կաթսայատուն | 233.02 | 205.1 | 8,530,000 |
| 18 | Կոմիտասի պող. 7/12 | կաթսայատուն | 333.46 | 275.3 | 26,750,000 |
| 19 | Ա.Խաչատրյան փողոց թիվ 4/3 | կաթսայատուն | 394.73 | 342.7 | 25,300,000 |
| 20 | Ադոնցի փող. Հ.17/6 | կաթսայատուն | 231.8 | 218.6 | 19,630,000 |
| 21 | Ադոնցի փող. Հ.13/10 | կաթսայատուն | 241.8 | 211 | 18,760,000 |
| 22 | Խաղաղ Դոնի փող. 27/4 | կաթսայատուն | 307.44 | 342.5 | 25,395,000 |
| 23 | Խաղաղ Դոնի փող. 7/8 | կաթսայատուն | 312.78 | 348.1 | 25,258,000 |
| 24 | Բաբաջանյան 143/3 | կաթսայատուն | 319 | 280 | 22,600,000 |
| 25 | Պուշկինի 44 | ոչ բնակելի տարածք | | 16.8 | 4,580,000 |
| 26 | Մաշտոցի 20 | ոչ բնակելի տարածք | | 37.8 | 9,745,000 |
| 27 | Մաշտոցի 48շ 78 տար | ոչ բնակելի տարածք | | 7.5 | 1,850,000 |
| 28 | Թումանյան 1անց 28 շենք | ոչ բնակելի տարածք | | 24 | 5,000,000 |
| 29 | Իսակովի պող 36/1 19,շին | ոչ բնակելի տարածք | | 39.9 | 5,350,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ **WWW.YEREVAN.AM**:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ ապրիլի 18-ին ժ.16.00-ին, ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2012թ ապրիլի 18-ը, ժամը 14.00-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 2.4.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: